

№ 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1883

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դ ե լ լ ա (հէքիաթ). Փոխ. Ն. Նեմեյով, Թարգ. Մ. Մամիկոնեան
Ծ ի ծ ե ռ ն ա կ (բանաստեղծութիւն) . . . . . Սրինդ
Լ ո ր ը (Ի. Տուրգենեվից) . . . . . Թարգ. Գ. Յովհաննիսեան
Փ ա յ ա ա շ է ն խ ը չ թ ի յ-Ս ա լ ի ա ա կ տ ո ւ-
ն ը (գլ. XII—XV) . . . . . Փոխ. Ն. Տ. Աւետիքեան

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Օդապարիկի հնարողները (վերջ) . . . . . Մաթ. Փամփուխչեան

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

Հրէաների բարեգործը

ՋՈՒԱՐՃԱԼԻՔ

Մանկական խաղ (Կռան-Թօփլի) . . . . . Աբշակ
Հանելուկներ (2 հատ)
Լեքսս.

« Ա Ղ Բ Ի Ւ Ր »

Առաջիկայ 1884 թուականի բաժանորդագրութիւնն արդէն բացուած է։ Ներկայ համարի հետ ուղարկում ենք մեր բոլոր բաժանորդներին, ուրի յարմարութեան համար, պատրաստած նամակներ և ծրարներ, ուր պէտք է մանրամասն և պարզ գրուին բաժանորդի հասցէն։

Բացի այդ ուղարկում ենք և առանձին թերթի վրայ տպագրուած յայտարարութիւն։ Ցանկալի էր, որ բաժանորդ գրուելու ցանկացողները բարեհաճէին յայտնել իրանց ցանկութիւնը մինչև առաջիկայ նոյեմբերի վերջերը, որպէս զի կարող լինէինք մօտաւորապէս որոշել համարների տպագրուելի թիւը։

ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵԽԱՆԵՐՈՒ

ԵՒ

ՊԱՏԻՐԱԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

№ 10

ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԹԻՓԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, 5
1883

Դ Ե Լ Լ Ա

(Հ ն դ ի ա թ)

Ա՛ստ հին ժամանակներում, ինչպես ասում է ժողովրդական աւանդութիւնը, Հնդկաստանում բնակվում էր մի արքայազն, որի անունն էր Դելլա։ Հօր մահուանից յետոյ Դելլան դարձաւ ժառանգ իր հօր ընդարձակ թագաւորութեան։ Դելլան գեղեցիկ, ընդունակ բայց թեթեւամիտ երիտասարդ էր։ Նա այնքան զուարճութիւնները էր սիրում, որ ամենևին չէր կամենում մի որ և է բան սովորել. նա միշտ փախչում էր աշխատանքից և, կարես, թշնամի էր աշխատանքի։ Արքայազնը ընկերների հետ միասին զբօսնում էր միշտ, որսի էր գնում և այսպէս ամեն ժամանակ ուրախութեան ու խնջոյքների յետևից էր ընկած։ Նրա ընկերները միշտ շողոքորթում, խաբում էին նրան։ Արքայազնը այնպէս յափշտակուած էր այդ տեսակ զուարճութիւններով, որ այլ ևս ոչնչով չէր պարապում։

Մի անգամ Դելլան ըստ սովորութեան որսի էր գընացել, անապատի քամին նրան թեթև գնտակի նման գլորում էր դաշտից դաշտ, իսկ նա յետևում էր իր որս եղջերուին՝ ձեռքից չը թողնելու համար։ Յանկարծ մի բօթաբեր ճանապարհորդ եկաւ և յայտնեց Դելլային հօր (իրանց թագաւորի) մահը։ Այս լուրը սարսափեցրեց

Դելլային. նա շփոթուեց գունաթափուեց և վայր ընկաւ գետնի վրայ։ Բայց նա չէր կարող երկար ժամանակ տխրութեան ետևից ընկնել, որովհետև ինքը լինելով իր հօր ժառանգը՝ նրա վրայ դրուեցան շատ պարտականութիւնները. նա պէտք է հոգս քաշէր իր հայրենիքը կառավարելու և վերահասու լինէր ժողովրդի բարեկարգութեան, բախտաւորութեան համար։ Իր թագաւոր լինելու մտածմունքից քիչ էր մնում խելքը կորցնէր։ Դելլան անփորձ լինելով՝ չէր իմանում ինչպէս տանէ իր գործը, ի՞նչպէս ընտրէ իր համար փորձառու, աղնիւ և արդար խորհրդակիցներ, որոնք իրանց բարի խորհուրդներով կարողանային իրան օգնել։

Երիտասարդ արքայազնը ընդունելով իր երկրի կառավարութիւնը, եղաւ անդադար պահանջող, և իր գործքերով հարիւրաւոր աններելի սխալներ գործեց։ Վերջապէս երիտասարդ արքայազնը բոլորովին մոռացաւ իր սուրբ պարտականութիւնները և սկսեց շարունակել իր առաջուայ զուարճասէր կեանքը, բոլորովին չը մտածելով իր հպատակների բարեկեցութեան վրայ։ Ժողովուրդը տանջվում էր անչափ տուրքերի շատութիւնից. խեղճերն անարգվում էին աստիճանաւորներից. զօրեղները յափշտակում էին թոյլերի ունեցածը։ Ժողովուրդը այլևս չը կարողանալով տանել այդ դժուարութիւնները՝ յուսահատուեց և ընդհանուր ուժով հրաժարեցրեց արքայազնին իր հայրական գահից։ Դելլայի համար ծանր էր այդ անպատուութիւնը. դեռ թաք կացաւ և լետոյ ստիպուեց գիւղացու շորեր հագած ծպտեալ կերպարանքով փախչիլ իր հայրենիքից։ Գնում էր նա՞ու գնում, բայց չը գիտէր

ուր, յոգնեց և ահա նրա առաջը բացուեց անտառ. նա նստեց նրա ծառերի տակ և դառը մտածմունքների մէջ ընկաւ։ Օրն ամպային էր, ոչ մի պայծառ ճառագայթ չէր ուղարկում երկինքը։ Հանդարտութիւն էր տիրում շրջակայքում, բոլորովին հանդարտութիւն. տխուր էր և խեղճ աքսորածի սիրտը։ Այդ միջոցին սև ագռաւը պտտում էր հին աւերից ծառի վրայ և ղրղրում էր չարագուշակ մի բան. այդ ձայները տրորում էին խեղճ արքայազնի սիրտը։ Այդ տխրութեան մէջ յանկարծ անտառից փայտ կտրելու ձայն լսուեց և կրկնուեց մի քանի անգամ։ Դելլան ցնցաց բոլոր մարմնով և կամաց կամաց քայլերն ուղղեց դէպի այն կողմը, որտեղից լսւում էր այդ ձայնը։ Գնում է և ահա նրա առաջ բացվում է մի ընդարձակ դաշտ, որի վրայ ընկած էին՝ պատերազմի դինուորների նման, ուժեղ ձեռքով կտրուած, երեք ծառերի բներ, նրանցից քիչ հեռու ընկած էին երկու ճիւղեր, որոնք նմանում էին դիակների։ Տեղ տեղ ծառերի հաստ բների վրայ դուրս էր եկել հոտաւէտ խէժը, որ աւելի նմանում էր մեռնող մարդու արտասուքներին։ Այդ տեղ նոյնպէս մի փոքրիկ բոբիկ տղայ ճարպիկութիւնով շրջում էր հանդարտ ծառերի միջով, հեշտութիւնով կտրատում էր նրանց ճիւղերը. վստահ թռչում էր ծառի ճիւղերի վրայ փոքրիկ թռչունը և բռնելով մէկ կամ երկու մոծակ ու բարձրանալով ծառի վրայ ուղևորվում էր դէպի իր բոյնն ու մի մի մոծակ դնում իր փոքրիկ ձագերի մէկի կամ միւսի դեղին կտցում։ Մի քիչ հեռու մի կողմում քրտնքում մտած մի հասակաւոր գիւղացի իր ձեռքն արագ շարժելով կտրում

էր արմատից մի նոր ծառ . . .

Այդ շքեղ տեսարանն այնպէս զբաղեցրեց Դելլային, որ, կարծես, իր կեանքում առաջին անգամն էր տեսնում . . .

Երկար կանգնելուց յետոյ, վճռեց մօտենալ փայտ կտրողին այս հարցով. «Բարով, եղբայր, նկատում եմ, որ յոգնած ես, թոյլ տուր, ես կատարեմ քո գործը, որ ինձ շատ ուրախութիւն կը պատճառէ . . .

Նայեց փայտ կտրողը Դելլային՝ ոտից մինչեւի գլուխը զննելով և ապա գլուխը թափ տալով պատասխանեց. «Ո՞րտեղից դու մեր գործին կարող ես մասնակցիլ, այդ քո սպիտակ և կակուղ ձեռները ցոյց են տալիս, որ պէտք է անընդունակ լինիս այսպիսի գործ կատարելու»:

— Ոչինչ, մի նեղանար այդ մասին, պատասխանեց Դելլան, իմ ձեռներս ամուր են, ուրեմն կարող են աշխատել . . .

— Բարի, եթէ այդպէս է, ուրեմն աշխատիր, իսկ ես մի քանի րոպէ կը հանգստանամ:

Դելլան ուրախացաւ, որ ընդունուեց իր խնդիրը, բայց նա երկչոտութիւնով և հանդարտ էր շարժում իր ձեռքի կացինը խփելով ծառի բնին: Մի քանի րոպէից յետոյ, նրա ձեռքի ափերը այրվում էին, այնպէս որ, կարծես, կրակի մէջ էին. իսկ կէս ժամից յետոյ քշտոտեցին և արիւնոտուեցան: Նա չէր նկատում իր ձեռքի ուռուցքը և այնպէս զբաղուած շարունակում էր իր գործը, որ ձեռքերի ուռուցքի ցաւն անգամ չէր զգում:

Ահա ծառը ճրճռաց և ընկաւ դաշտի վրայ, մեր նոր բանուորի սիրտն ուրախութիւնով լցուեց իր առաջին անգամ արած յառաջադիմութեան համար և իսկոյն

վազեց դեպի փայտ կտրողն ու աղերսելով խնդրեց, որ իրան բանուոր ընդունէ։

Փայտ կտրողը պատասխանեց. «Սաստիկ դժուար է մեր գործը, այդ լաւ գիտենաս. մենք բոլոր դժուարութիւնները համբերութիւնով տանում ենք, այսինքն՝ ցուրտ ձմեռը, սովածութիւնը, մինչև անգամ ծառայութիւնը . . . Ո՞րտեղ է քո ոյժը, որ դու կարողանաս տանել վերոյիշեալ դժուարութիւնները»։

—Պարոն, ես երիտասարդ եմ, քեզ հաւատացնում եմ և ազնիւ խօսք եմ տալիս, որ կարող եմ այդ գործը կատարել։

Լսելով այս ազնիւ խոստմունքը, խղճահարուեց փայտ կտրողը և վերցրեց նրան իրան բանուոր։ Երեկոյեան քաղցածութիւնից Դելլան ստիպուեց ընթրել սիսեռով արգանակ չոր հացի հետ և պառկել խոնաւ խոտի վրայ խրճթի մի անկիւնում, որտեղ անձրևի կաթիլները ներս էին թափվում և ընդմիջանց քամին անդադար փչում էր։ Դելլայի կեանքը միակերպ էր, այսինքն նրա ընթրիքը, անկողինը և բնակարանը ամենայն օր նոյնն էին . . . Այդպէս շարունակվում էր նրա երկարատև աշխատանքը և սաստկանում էր նոյնպէս օր ըստ օրէ նրա դառը մտածմունքները։ Դելլայի երիտասարդութիւնը և յոյսը համբերել էր տալիս, նա քաջալերվում էր, որ իր ամենօրեայ ապրուստը աշխատելով էր ճարում։ Այսպէս միակերպ անցնում էր ամիսը ամսի յետևից. նրա տէրը նկատելով իր բանուորի մէջ յառաջադիմութիւն, վարձատրեց նրան ըստ արժանոյն և ապա ուղարկեց իր ազգականի մօտ, որ պարապում էր միայն նաւաշինութիւնով։

Շուտով Դելլան բանուոր ընդունուեց և նստեց ա-տաղձագործների կարգում իր նոր տիրոջ մօտ...

Այստեղ Դելլայի գործը թեթև էր, վարձատրվում էր աւելի լաւ, լաւ էր նոյնպէս նրա ամենօրեայ կերա-կուրը և բնակարանը. միայն մի բան սաստիկ դժուարա-յրեց առաջի անգամ Դելլային, այն էր՝ որ այստեղ պա-հանջվում էր նոյնպէս և մտաւոր գիտութիւն, բայց մեր խեղճ Դելլան իր անունն անգամ դժուար էր խմբըգ-տում: Այս դժուարութեան առաջն առնելու համար Դելլան վճռեց պարապել և իրան նուիրեց գիտութիւն-ներին: Առաւօտը նա աշխատում էր ֆիզիքապէս, այս-ինքն՝ նա ցերեկը դանդում էր, սղոցում էր տախտակնե-րը, մեխում և տեղաւորում էր նրանց որտեղ որ հար-կաւոր էր և այլն. իսկ գիշերները անխոնջ պարապում... Քանի շատ էր պարապում Դելլան, այնքան աւելի շատ բան էր կամենում սովորել:

Նրա տէրը նկատեց, որ իր երիտասարդ բանուորը գերազանցեց մնացած բանուորներից: Այդպէս անցնում էր տարին տարիի ետևից...: Կարիքը և դժուար աշխա-տանքը գցել էին (թառամեցրել էին) Դելլային, բայց նա չէր վհատվում՝ զգալով իր մէջ փոփոխութիւն դէպի լաւը. դրա համար նա ազատ էր շնչում: Դելլան ար-դէն իր տիրոջ աչ ձեռն էր և ամենայուսալի օգնա-կանը: Երիտասարդ արքայազնը թէպէտ սկսած էր ծածկելու իր իսկական անունը, բայց և այնպէս շատ գոհ էր իր կեանքից: Շուտով նրա մէջ արթնացաւ ազ-գային ազնիւ ինքնասիրութիւնը. հարստացնելով իր խելքը գիտութիւններով, նա երբեմն հարց էր տալիս

ինքն իրան, ասելով թէ՝ մի թէ ես հիմա ևս արժանի չեմ իմ հայրական գահը նստելու։

Դելլայի առաջուայ հպատակները բոլորովին օգուտ չունեցան աքսորելով նրան։ Դելիի ազգականը, որ վարում էր Հնդկաստանի կառավարութիւնը (Դելլայի տեղ) շատ չար և խիստ մարդ էր, նա շատ էր ճնշում և հարըստահարում խեղճ ժողովրդին, որոնք այլ ևս չը կարողանալով ազատուել այս թշուառ դրութիւնից, մտաբերում էին իրանց արքայազն Դելլային ասելով. «Մինչև չը գայ յետինը չի յիշուի առաջինը», եթէ նա սխալվում էր և ունէր պակասութիւններ, գոնեա նա երիտասարդ էր և յոյս կար, որ նա ուղղուէր դէպի լաւը, որովհետև նա ունէր բարի և ազնիւ սիրտ. ինչ համեմատութիւն սրա և նրա մէջ... Օր ըստ օրէ սաստկանում էր նրանց ափսոսանքը և փափագը դէպի արքայազնը, ասում էին նոյնպէս՝ եթէ վերադառնար, մենք մեծ ուրախութիւնով դարձեալ կընդունէինք նրան։ Այս լուրերը հասաւ Դելլայի ականջին ևս, որի սիրտը բաբախում էր ուրախութիւնից և սաստիկ ցանկանում էր հոգալ իր առաջուայ հպատակների բարեկաւութեան համար, որով կը կարողանայ ուղղել իր առաջուայ արած (գործած) չարութիւնները և սխալները։ Բայց ինչպէս պէտք է կատարել, մտածում էր նա... Ուրեմն պէտք է հաւաքել հաւատարիմ հպատակներ և այժմ մտնել հայրենիք, ոչնչացնել նրան կրակով և սրով... Օ՜, ոչ, այդ սարսափելի կը լինի...

Այնեն անգամ Դելլան այսպէս մտածմունքներից յետոյ գունաթափվում էր և ջղային ցնցում էր զգում...

Գիշեր էր, հանդարտութիւն էր տիրում. աղմկալի քաղաքի փողոցներում մի ձայն անգամ չէր լսվում։ Բարձր երկնքում աստղերը հանդարտ պսպղում էին։ Քաղաքից դուրս գտնուած գաշտում գերեզմանատան մօտ իբրև մի ստուեր թափառում է Դելլան։ Նրա սիրտը լի էր թէ տխրութիւնով և թէ ուրախութիւնով։ Այդ ժամանակ նրան այնպէս երևաց թէ եկան պաշտօնապէս ժողովրդից ընտրուած ներկայացուցիչները, որոնք աղաչում էին, որ արքայաղնը նորից ընդունէ իր գահը. և վերջնականապէս յայտնեցին թէ ժողովուրդը աքսորել է նրա ազգականին, բայց արքայաղնը գիտէր, որ իր թշնամին անպատճառ կ՚սկսէ պատերազմիլ քանդելով գիւղեր և գիւղաքաղաքներ։ Նոյն միջոցին ջղային ցնցումն պատել էր նրա մարմինը, տխուր էր դէմքը, և. կամայ ակամայ նրա աչքերը լցուեցին արտասուքով։ Կանգ է առնում Դելլան, հայեացք է գձում դէպի երկինքը բացականչելով. «Ով Տէր Աստուած, այս ի՞նչ պէտք է լինի և ի՞նչ հետևանք պէտք է ունենայ այս գործը»։ Երկնքում շարժուող ամպերը ծածկում էին լուսնի լոյսը, հեռանում էին միմեացից կամ կրկին միանալով ծածկում էին երկնքի պայծառ աստղերին. խաւարն ու մութը տիրում էր շրջակայքում ինչպէս գերեզմանատանը։ Փչեց կայծակը, հարիւր կրակէ կայծեր երևացին շրջակայքում, գոռաց խուլ և երկարատև ամպը. կարծես թէ՝ նոյն գործողութիւնը կատարուեց և Դելլայի սրտում։ Ամենայն տեղ պատերազմ է և ահը արտայայտվում է բնութեան մէջ, նա մտմտուքի մէջ ընկած նստեց գերեզմանի քարի վրայ. թափուեց խոշոր կարկուտէ անձրևը, որից յետոյ նորից տիրեց շրջակայքում բոլորովին տխրութիւն։

Դելլան նայելով երկնքի փոթորիկին, որ հետզհետէ հանդարտվում էր, հանդարտվում էր և նրա սիրտը և ահա երևաց լուսինը, տարածեց իր լոյսը, լուսաւորուեց և Դելլայի սիրտը . . .

Միւս օրը Դելլան ուղևորուեց դէպի իր Թագաւորութիւնը (հողը) . . . Այնտեղ հին դերեզմանատանը լուռ դիշերային ժամանակ ինքն իրան ժողուեց, նրա աչքերը վառուեց ազգասիրական հոգով և բոլորովին քաջալերուեց . . . Բայց նրան աքսորող Թշնամին ևս չէր քնած, որովհետև խիստ բնութեան տէր էր, ուստի ժողովեց իրան հաւատարիմ հպատակներին և գնաց նրա դէմ պատերազմելու: Դելլան մտնելով իր հայրենիքը լսեց ժողովուրդի անչափ ուրախութեան ձայները և յանկարծ երես առ երես հանդիպեց իր Թշնամուն: Վառուեց սարսափելի և աննկարագրելի պատերազմ, Դելլան առաջնորդում էր իր զօրքերին, մի րոպէ անգամ չը հեռանալով նրանցից. զարմանալի քաջութիւններ ցոյց տուեց: Պատերազմը երկար շարունակուեց, բայց յաղթութիւնը անորոշ էր: Ի վերջոյ Դելլան չը կամենալով այլ ևս իր հաւատարիմ հպատակների արիւնը թափել, մենամարտութեան հրաւիրեց իր Թշնամուն: Դելլան յաղթող հանդիսացաւ, և նա ինչպէս ազնիւ և վեհանձը մարդ, խնդրեց իր ազգականին, որ եթէ կը բարեհաճէ հանդարտ կենալ, կարող է բնակուիլ նոյն քաղաքում, այն պայմանով միայն, որ արձակէ իր մարդկերանց և այլ ևս նրանց օնութեանը չը դիմէ:

Բոլորը հանդարտուեց: Երկրորդ անգամ Դելլան մեծ հանդիսով և յաղթութիւնով նստեց իր հօր գահը:

Ամեն կողմից ժողովուրդը ուրախությունով դիմում էր դէպի իրանց մայրաքաղաքը, իրանց փափագը լսուցանելու, այն է՝ նորից տեսնելու և զուարճանալու իրանց երիտասարդ թագաւորի վրայ։ Երբ Դելլան՝ նստած շքեղ զարդարուած փղի վրայ անցնում էր ժողովուրդի մէջով, և ուրախ ժպիտով բարևում նրանց, այն միջոցին նրա գլխի վրայ պտտում էր մի արծիւ, որի նշանակութիւնը բոլորովին անհասկանալի էր ժողովուրդի համար։ Այդ թագաւորական հսկայ թռչունը բարձրանալով և ցած իջնելով, կարծես, իր գոհունակութիւնն էր յայտնում խառն բազմութեանը։ Ուրախ էին բոլորքեան, առաւել հասարակ ժողովուրդը՝ արծուին տեսնելով գուշակում էր շատ բարի բաներ։ Շուտով կարգ ու կանոն, ազատութիւն, գոհունակութիւն և արդարութիւն տիրեց աշխատասէր Դելլայի ամբողջ տէրութեան մէջ։

Փոխադրեց. Ն. Ա. ՆԵՄԻՐՈՎԻՉ

Թարգ. ՄԱՐԻԱՄ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ։

ԾԸՆԾԵՂՆԱԿ

Սևափետուր քնքոյշ ծիծառ,
Ասա, ինչո՞ւ ողջ տարին
Չես երգում մեր սիրուն երկրում,
Որ սփոփես ամենին։

Բայց դեռ կիսին սեպտեմբերի
Հեռանում ես. սլանում
Դէպի օտար հեռու աշխարհ,
Քաղցր երգից մեզ զրկում։

Մի՛ վախեցիր կոշտ ձմեռից,
Քաղցած երբէք չես մնայ,
Կը բերեմ քեզ համար միջատ
Ես ամեն օր համարեա։

Մի բուն շինիր իմ սենեակի
Մաքուր յարմար անկիւնում.
Ձուտեր հանիր, ուրախացիր,
Երգեր հնչիր ոլորուն։

Մնա, մնա, քախցրախօսիկ,
Մեր սքանչելի երկրում,
Որ զգայուն տաղերովդ
Ազդես վայրի մաքերուն . . .

Իսկ ծիծառը թափահարեց
Իր սուր—երկայն թևերին,
Բերան բացեց, պատասխանեց
Ալս խօսքերով ծանրագին՝

—Բայց իմացիր, ես չեմ սիրում
Դունաթափ մեռած աշուն.
Ամեն շնչող այդ միջոցին
Մաշվում է և թառամում . . .

Ես չեմ սիրում նմանապէս
Դառնաշունչ ծերուկ ձմեռ.
Այդ եղանակ ոպառում է
Մեր աշխարհի պիտոյքները . . .

Զուզեմ, տեմ այդ երկուսին,
Դրանք բիրտ են, անիրաւ . . .
Մէկը խեղդում, միւսը, թաղում—
Ո՛հ . . . պատուհաս խիստ անբաւ . . .

Սակայն գարուն, նաև ամառ
Պաշտելի են ամենին . . .
Մէկում ծաղկում, միւսում հասնում—
Ահա, բարիք թանգագին . . .

Ահա, ինչու գարուն ամառ
Կը գամ ընդ միշտ ձեզի հիւր,
Որ թրթռամ, գուարճանամ,
Չերթ հաճելի մի զեփիւռ . . .

ՍՐԻՆԳ

ԼՈՌՔԷ

(Մանկական տպաւորութիւնները)

Ա.

Ս տասը տարեկան էի, երբ պատահեց այն՝ ինչ որ պատմելու եմ ձեզ։ Այդ ժամանակ հօրս հետ ես ապրում էի Հարաւային Ռուսաստանի դաստակերտներից մէկում։ Մեր շուրջը մի քանի վերստ հեռաւորութեան վրայ փռւում էր ամայի դաշտը։ Մեզնից մօտիկ ոչ անտառ կար, ոչ գետ։ Մացառներով ծածկուած, կանաչ օձերի նմանութիւնով, հեղեղատներն այստեղ և այնտեղ պատառում էին հարթ դաշտավայրի երեսը։ Հեղեղատների հունով հոսում էին առուակները և տեղ տեղ, համարեա զառիվայրի բարձրում, երևում էին վտակներն արտասուքի նման պարզ ջրերով, ուր հասնում էին կոխկրտած շաւիղները։ Ջրի ափին, խոնաւ կաւահողի վրայ նշմարվում էին թռչունների և ուրիշ կենդանիների թաթերի հետքեր։ Կենդանիները, ինչպէս և մարդիկ, լաւ, մաքուր ջրի պահանջ ունին։

Հայրս որսորդութեան մեծ սէր ունէր։ Եթէ եղանակը լաւ էր և գործերից ազատ ժամանակ էր գտնում՝ վերցնում էր իր հրացանը, ձգում էր ուսին մախաղը, սուլելով կանչում էր իր ծեր Տրզէզօրին և գնում լորեր ու կաքաւներ որսալու։ Նա արհամարհում էր նապաստակներին, որոնք, նորա ասելով, վայել են միայն եղջերուների որսորդներին։ Դրանց և աշնան կտցարաններին ու երեներին կարելի էր տեսնել մեզ մօտ։ Բայց անթիւ շատ էին լորերն ու կաքաւները, մանաւանդ կաքաւները։ Հեղեղատների զառիվայրին հետևելով ամեն մի րոպէ

կարելի էր հանդիպել փոքրիկ փոսերի, ուր նրանք կըծկուած էին լինում։

Ծեր Տրէզօրը հոտ էր առնում. նրա ագին դողում, ճակատի կաշին շարժվում էր, իսկ Հայրս՝ զգուշութիւնով իր հրացանի կայծհանը բարձրացնելիս՝ գունատվում էր։ Իմ բախտից նա ինձ յաճախ տանում էր հետը։ Անդրավարտիքիս տոտերը դնում էի կօշիկներիս մէջ, ուսովս էի գըցում ջրամանը և ինձ երևակայում էի կատարեալ որսորդ։

Ջրհինքը թափվում էր ինձնից, կօշիկներս լցվում էր աւազով, բայց ես ամենևին յոգնութիւն չէի զգում և ոչ մի քայլ հօրիցս յետ չէի ընկնում։ Ամեն անգամ, երբ հրացանը արձակում էին և կենդանին ընկնում էր, ես թռչկոտում էի տեղս՝ ազաղակելով—ի՜նչ բախտաւորութիւն։ Վիրաւորուած թռչունն իր թևերը շարժելով ծփում էր երբեմն խոտի և երբեմն Տրէզօրի բերանում, նրա արիւնը թափվում էր, իսկ ես, ես զուարճանում էի. ես ոչինչ գթութիւն չէի զգում։

Ի՞նչ. ինչե՞ր չէի անիլ, միայն թէ լորերը ու կաքաւները սպանելու համար մի անգամ արձակէի հրացանը։ Բայց Հայրս ինձ յայտնել էր, որ տասներկու տարեկանից վաղ ես չէի ստանալու հրացանը, որ նա պիտի լինէր միափողանի և որ ինձ միայն նրանով արտոյտներին թոյլ կը տային որսալ։ Նրանք անհամար էին մեր կողմերում. արևային գեղեցիկ օրերին կը տեսնէինք տասնեակներով պարզ երկնքում թռչելիս։ Նրանք բարձրանում ու բարձրանում էին միշտ սուր, ինչպէս զանգակի ձայն, ծլվլոցով։ Ես նայում էի նրանց ինչպէս իմ ապագայ աւարի վրայ և փայտովս, որ միշտ հրացանի պէս ուսիս էր լինում, նրանց նշան էի դնում։ Շատ հեշտ է նրանց հասնելը, երբ նրանք գետնից հինգ-վեց ոտնաչափ հեռաւորութիւնով սարսռելով տարածում են իրանց թևերը։

Երբեմն հեռու հնձուած դաշտերի կամ կանաչ մարգերի

վրայ նշմարվում էին արօսները: «Ախ, հառաչում էի ես, սպանել այդպիսի մի մեծ թռչուն և ապա մեռնել»:

Եւ նրանց մատուցս ցայց էի տալիս Հօրս, իսկ սա միակերպ պատասխանում էր, որ արօսը շատ զգոյշ կենդանի է և որ նա մարդուն իրան մօտենալ չի թողնի: Սակայն մի անգամ նա փորձեց մօտենալ մի զատուած արօսի, կարծելով, որ նա կապարեայ գնտակից վիրաւորուած, յետ է մնացել իր խմբից: Նա պատուիրեց Տրէզօրին հետևել իրան, իսկ ինձ չը շարժուել. նա լսրեց իր կապարեայ գնդակաւոր հրացանը, դարձաւ դէպի Տրէզօրը, ցածր՝ բայց հրամայական ձայնով ասելու, «Հեռո՛ւ, հեռո՛ւ»: Կռացաւ որքան կարելի է ցած և գնաց, ոչ ուղիղ, այլ շեղ ուղղութիւնով: Տրէզօրը չէր կռանում, բայց ընդունել էր մի անսովոր ընթացք՝ իր ծուռ թիկունքով, սեղմած ագիով և ատամների մէջ բռնած մի շրթունքով: Ես այլ ևս չը համբերեցի և. հետևեցի Հօրս, համարեա սողալով: Բայց արօսը մեզ թոյլ չը տուեց երեք հարիւր քայլ հեռաւորութիւնից պակաս մօտենալ իրան, նա սկսեց վազել և յետոյ թևերը շարժելով թռաւ: Հայրս հրացանը արձակեց և յետոյ նայեց նրա հետևանալուն: Տրէզօրը նախ ոստնեց և ապա սկսեց նայել: Ես և ես, ես նայում էի... Ես անչափ վշտացած էի, նա մի՛ թէ չէր կարող մի փոքր ժամանակ սպասել: Անկասկած նրան կը սպանէին:

Մի ուրիշ անգամ ես Հօրս հետ գնացի որսի: Սուրբ Պետրոսի տօնի նախընթաց օրն էր: Տարուայ այդ միջոցին չահել կաքաւները դեռ մանր են: Հայրս չէր կամենում նրանց որսալ: Նա մտաւ կաղնու թաւուտքի մէջ, հաճարի արտին կից, ուր կարելի էր միշտ լորեր գտնել: Խոտը, որովհետև անյարմար էր հնձել այդ թաւուտքի մէջ, վաղուց ազատ բուսել էր, ինչպէս և հազարաւոր ծաղիկներ՝ վիկն, առուոյտ, շուշան, կապոյտ մանիշակ, վայրի մեխակ և այլն:

Երբ ես քրոջս կամ աղախնի հետ անցնում էի այս կողմերով՝ մի դիրկ լիքը բերում էի նրանցից։ Իսկ երբ հօրս հետ էի գնում, ես այլ ևս այնտեղ ծաղիկներ չէի քաղում, այդպիսի պարապմունքը անվայել համարելով մի որսորդի համար։

Յանկարծ Տրէզօրը հոտ առաւ, «յափշտակիր», աղաղակեց Հայրս։ Տրէզօրի քթի տակով մի լոր անցաւ և թռաւ։ Բայց նա տարօրինակ կերպով էր թռչում. մէկ տապալում, մէկ շրջշրջվում, մէկ գետին ընկնում, կարծես թևից վիրաւորուած լինէր։ Տրէզօրը իսկոյն վրայ թռաւ.... բայց նա այդպէս չէր անում, երբ թռչունն իր բնական թռիչքով էր թռչում։

Հայրս չը կարողացաւ հրացանը արձակել, վախենալով թէ մի գուցէ գնդակը Տրէզօրին դիպչի։ Իսկ սա մի անակնկալ ոստումն արեց թէ չէ, բռնեց լորին և բերաւ հօրս մօտ։ Հայրս վերցրեց և բերանովը դրեց նրան բռի մէջ։ Ես շուտ վազեցի նրա մօտ։

—Ի՞նչ է, հարցրի, վիրաւորուած է.

—Ո՛չ, պատասխանեց Հայրս, սրա բունը պէտք է որ այստեղից հեռու չը լինի, սա իրան վիրաւորուած ձևացրեց՝ որ շունը կարծի թէ նրան հեշտութիւնով կը բռնի։

—Բայց ինչո՞ւ է նա այդ անում։

—Իր փոքրիկներից շանը հեռացնելու նպատակով. այնուհետև նա մեծ արագութիւնով կը թռչէր։ Բայց այս անգամ սա իր հաշուում սխալուեց, սա իր կատակերգութեան մէջ չափն անցաւ և Տրէզօրը նրան բռնեց։

—Ուրեմն դա վիրաւորուած չէ՞, հարցրի ես կրկին։

—Ո՛չ... բայց սա չի ապրիլ... Տրէզօրը իր ատամներով հարուած է տուել։

Ես մօտեցայ, որ լորին աւելի մօտից տեսնեմ, նա անշարժ բռի մէջ կախել էր գլուխը։ Նրա սևորակ աչքը նայում էր ինձ կողքից. յանկած ես

խղճահարուեցայ, ինձ թուում էր, որ խեղճ կենդանին նայում է ինձ և մտածում. «Ինչո՞ւ պէտք է ես մեռնեմ։ Արդեօք իմ պարտքս չը կատարեցի՞ ես, ես չանացի փոքրիկներիս ազատել՝ շանը հեռու տանել և ահա ես ընկել եմ. ինձնից զրկուածք, խեղճուկներ։ Այս արդարութիւն չէ, ո՛չ, սա արդարութիւն չէ։»

—Հայրիկ, կարելի է դա չի մեռել, բացագանչեցի ես, աշխատելով գուրգուրել փոքրիկ թռչունի գլուխը. բայց հայրս ասաց՝

—Սա կը մեռնի։ Ա՛հա, նայի՛ր, մի վայրկեանից յետոյ սրա մատները կը ձգուին, բոլոր մարմինը կը սառչի և աչքերը կը փակուին։

Արդարև ասածը կատարուեցաւ։ Երբ նրա աչքերը փակուեցան, ես սկսեցի լաց լինել։

—Ի՞նչ պատահեց քեզ, ասաց ինձ հայրս ծիծաղելով։

—Ես դրան խղճում եմ, պատասխանեցի։ Դա իր պարտաւորութիւնը կատարեց և դրան սպանեցին . . . այդ անարդարութիւն է։

—Սա ուզեց աւելի խորամանկ երևալ, բայց Տրէզօրը յաղթեց։

—Չար Տրէզօր, մտածեցի ես, և այդ րոպէին ինձ թուում էր թէ հայրս ինքը էս բարի մարդ չէ։ Դրանում ոչինչ խորամանկութիւն չը կայ, դա սէր է դէպի իր փոքրիկները և ո՛չ թէ խորամանկութիւն։ Եթէ նա ստիպուած էր կատակերգութիւն խաղալ իր ճուտերին ազատելու համար, այն ժամանակ Տրէզօրը նրան չը պիտի բռնէր։

Լորին հայրս ուզեց մախաղի մէջ ձգել, բայց խընդրեցի, որ ինձ տայ։ Ես նրան դրի երկու ձեռքիս մէջ, ես նրան տաքացնում էի իմ շնչառութիւնով, կարծելով թէ՝ գուցէ նա կը զարթնի, սակայն նա չը շարժուեց։

—Ժամանակդ կորցնում ես, իմ ընկեր, ասաց ինձ

Հայրս, դու նրան յարութիւն չես տալ։ Տես, ինչպէս դրա գլուխը կախուած է։ Ես կտուցից բռնեցի և կամաց բարձրացրի, բայց երբ կտուցը բաց թողի՝ նա վայր ընկաւ։

—Դու կրկին խաղում ես դրան, ասաց ինձ Հայրս։

—Ո՞վ կը կերակրի սրա փոքրիկներին, հարցրի ես իմ հոգմից։

Հայրս նայեց ինձ ուշադրութիւնով։

—Մի՛ հոգար, պատասխանեց նա ինձ, սրուն՝ Հայրը կը կերակրի նրանց։ Սակայն սպասի՛ր. տես, Տրէզօրը կըրկին պատրաստւում է. գուցէ այն տեղ բունը... արդարև բունն է։ Եւ ճշմարիտ, խոտերի յողուննեըի մէջ, Տրէզօրի դնչից երկու քայլ հեռու, ես նկատեցի չորս փոքրիկ լորիկները, որոնք պարանոցները ձգած սեղմում էին միմեանց. նրանք այնպէս արագ էին շնչում, որ կարծես, դողալիս լինէին։ Նրանք բմբուլի տեղ փետուրներ ունէին արդէն, միայն կարճ էին դեռ պոչերը։

—Հայրիկ, հայրիկ, աղաղակում էի ես իմ ոյժի բոլոր զօրութիւնով, կանչի՛ր Տրէզօրին, սա նրանց էլ կը սպանի։

Հայրս չեռ կանչեց Տրէզօրին և առանձին մի մայառի տակ նստեց նախաճաշելու։ Բայց ես մնացի բնի մօտ՝ հրաժարուելով ուտելուց։ Գլպանիցս հանեցի սպիտակ թաշկինակս և նրա վրայ դրի լորին։ «Նայեցէ՛ք, խեղճուկ որբիկներ, ահա ձեր մայրը։ Սա զոհուեց ձեզ համար»։ Փոքրիկները, ինչպէս մի փոքր առաջ, ամբողջ մարմնով դողալով շնչում էին արագութիւնով։ Յետոյ մոտեցայ Հօրս։

—Դու այս լորը կընծայէս ինձ, հարցրի նրան։

—Եթէ ուզում ես, ինչո՞ւ չէ. բայց ի՞նչ պիտի անես դրան։

—Ես կամենում եմ թաղել նրան։

—Թաղե՛լ։

—Այո՛, այնտեղ, փոքրիկ բնից ոչ հեռու։ Տե՛ր ինձ քո դանակը, որ մի փոքրիկ փոս փորեմ։

—Որ նրա ճուտերը գնան ապօթելու գերեզմանի վրայ, ասաց Հայրս զարմացած։

—Ո՛չ, ասացի ես, այդ իմ զուարճութեան համար է։ Սա այնտեղ, իր բնի մօտ, իրան լաւ կ՚զգայ։

Հայրս առանց մի խօսք աւելացնելու որոնեց իր դանակը և տուեց ինձ։ Ես իսկոյն սկսեցի փոքրիկ փոսը փորել։ Ես համբուրեցի լորի կուրծքը, նրան փոսի յատակի վրայ դրի և հողը ածեցի վերևից։ Յետոյ միևնոյն դանակով կարեցի երկու փոքրիկ ոստեր, մաքրեցի կեղևը, որից շինեցի մի խաչ, կապեցի նրան խոտով և ցցեցի այդ խաչը գերեզմանի վրայ։

Մենք շուտ հեռացանք, բայց ես ամեն մի քայլից յետոյ յետ էի նայում . . . խաչը սպիտակ էր և երևում էր հեռուից։

Հետևեալ գիշերը ես երազ տեսայ։ Ինձ այնպէս էր թւում, որ երկնքումն եմ և ահա փոքրիկ ամպի վրայ նկատեցի իմ լորին միայնակ. միայն նա բոլորովին սպիտակ էր, ինչպէս այն խաչը։ Եւ նա գլխին ոսկեայ պսակ ունէր, ի հարկէ, իբրև վարձատրութիւն այն չարչարանքի համար, որ նա իր որդկերանց համար կրեց։

Հինգ թէ վեց օրից յետոյ հօրս հետ կրկին եկայ միևնոյն տեղը։ Խաչը, որ փոքր ինչ դեղնել և կանգնած էր մնացել, ցոյց տուեց ինձ գերեզմանի տեղը։ Բայց բունը դատարկ էր. հետք չէր մնացել փոքրիկներից։ Հայրս հաւատացրեց ինձ, որ արուն նրանց մի այլ տեղ է տարել, և երբ արուն մի քանի քայլ հեռաւորութիւնով դուրս եկաւ մայաւից, Հայրս չարձակեց հրացանը։ Եւ ես մրտածեցի. «Ո՛չ, Հայրս չար չէ»։

Զարմանալի բան, այդ օրից սկսածիմ սէրը դէպի որսորդութիւնը պաղեց բոլորովին, և ես ամենևին չեմ մտածում

խոստացած Հրացանի մասին։ Աւելի ուշ, ճիշտ է, երբ ես մեծացայ, սկսեցի որսորդութիւնով պարապել, բայց երբէք կատարեալ որսորդ չեմ եղել։

Բ.

Մի օր ես որսի էի գնացել ընկերոջս հետ. մենք գտանք վայրի աքաղաղի (փայտմորեկի) մի ընտանիք. մայրը թռաւ, մենք հրացան արձակեցինք։ Նա վիրաւորուեց, բայց վայր չընկաւ և իր փոքրիկներից աւելի հեռու թռաւ։ Ես ուզեցի նրանց հալածել։

—Լաւ է մնանք այստեղ, ասաց ինձ ընկերս, մենք նրանց ձայնին եթէ նմանեցնենք՝ բոլոր խումբը յետ կը դառնայ իսկոյն։

Իմ ընկերս սքանչելի կերպով վայրի աքաղաղին նմանեցնում էր։ Մենք նստեցինք։ Նա սկսեց կանչել, և արդարև, նախ մի չահել աքաղաղ պատասխանեց, յետոյ մի երկրորդը, յետոյ վերջապէս ինքը՝ մայրը, բոլորովին մօտիկ մի քաղցր ձայնով... Ես բարձրացրի գլուխս և տեսայ, որ նա դէպի մեզ շտապելով գալիս է։ Նրա կուրծքը արիւնոտ էր։ Անկասկած Նրա մայրական սիրտը չը համբերեց. նա կամեցաւ մեր ուշադրութիւնը իր վրայ դարձնել։ Այդ վայրկեանից ես ինձ չարութեան հրէշ համարեցի։ Ես վերկացայ ձեռքերս ծափ տալով։ Մայրը իսկոյն թռաւ և փոքրերը լռեցին։ Իմ ընկերս զայրացած էր, ինձ վրայ խելագարի պէս նայեց։

—Դու բոլորովին մեր որսը խանգարեցիր, ասում էր նա ինձ։

Բայց այդ օրուանից սպանել, անմեղ արարածների արիւն թափելն ինձ համար աւելի և աւելի ատելի դարձաւ։

† ԻՎԱՆ ՏՈՒՐԳԵՆԵՎ

ԹՈՐԳ. ԳԵՁԻՐՆԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ

(Revue politique et litteraire № 10 tome 32.)

ՓԱՅՏԱԾԷՆ ԽՐԱԹԻՑ՝

ՍՊԻՏԱԿ ՏՈՒՆԸ

(Շարունակութիւն)

XII

Յաւն վերադառնալով Հարֆիլդը մօրը յանձնեց բոլոր իր աշխատանքը, բայց Խետալին տուած աննդադրամից։ Տիկին Հարֆիլդը շատ ուրախացաւ որդու գալստեան վրայ, սակայն նրան տանջում էր դարձեալ այն միտքը, թէ արդեօք չ'ետ է կացել որդին նաւաստի լինելու մտադրութիւնից, թէ ոչ։ Բայց և այնպէս այդ երկուսի համար փոփոխ հարցի մասին խօսակցութիւն չը բացուեց և Ջէմսն էլ շարունակեց առաջուան պէս յառաջ տանել գիւղատնտեսական գործերը ագարակում։

Ամառուայ կիսին քեռի Ամօս Բոյտօնը պէտք է խոտահարներ և հնձողներ վարձէր չորս ամիս ժամանակով՝ մինչև նոյեմբեր։ Յաղթանդամ, ճարպիկ և աշխոյժ Հարֆիլդը Բոյտօնի համար թանգագին գիւտ էր։ Եւ նա ուրախութիւնով վերցրեց նրան իր մօտ բոլոր այդ ժամանակ։ Ջէմսը չորս մարդու չափ բան էր շինում. նա գարթնում էր արշալուսին և վերջացնում պարապմունքը արևի մայր մտնելիս։ Ուտման և առհասարակ զբաքերի վրայ խորհելու ժամանակ չը կար. նրա շուրջը գտնուած աշխատաւորների մէջ մտաւորական զբաղմունքների կարևորութիւն չէր զգացվում. տասնուվեց ժամ դաշտերում կամ մարգագետիններում անցկացնելուց յետոյ՝ իւրաքանչիւրի միակ փափագը շուտով քնելն էր։ Այդպէս անցաւ ամբողջ չորս ամիսը և Հարֆիլդը տուն դարձաւ 48 դենարով, որ տուեց մօրը։

Հարֆիլդը թէև տանն էր, բայց առաջուանը չէր, այլ մտայոյզ և մի տեսակ հոգսի մէջ ընկած էր երևում. մայրը իսկոյն նկատեց այդ և հասկացաւ բանի էութիւնը՝ իր որդին էլի անձկութեան մէջ էր ծովի պատճառով, բայց լռեց։

Ձմեռն այդպէս անցաւ, Ջէմսը էլի ուսումնարան էր յաճախում, բանում էր ազարակում, գարնան սկզբում պարապմունք գտաւ Կլևելանդում, իսկ դաշտային գործերը երբ վրայ հասան՝ յետ եկաւ կրկին «փայտաշէն խրճիթը»։ Անձկութիւնը, անընկճելի անձկութիւնը հանգըստութիւն չէր տալիս նրան։ Վերջապէս յուլիսի սկզբին խեղճը այլ ևս չը համբերեց։

— Սիրելի մայր, ասաց նա, դու չես կարող հաւատալ, թէ ի՜նչպէս սիրտս ծովը քաշում է, թոյլ տուր ինձ նաւաստի լինել նաւի վրայ։

— Ո՞ւր կը կամենայիր արդեօք նաւել, Ջէմս, հարցրեց մայրը։

— Ինձ համար ողջ մէկ է, միայն նաւէի և տեսնէի, թէ ինչեր են լինում լոյս աշխարհում, ակամայ պատասխանեց յուզուած Ջէմսը։

— Զարմացք է, որ քեզ պէս ընդունակ տղան չէ կարողանում իրան հաշիւ տալ՝ թէ արդեօք ո՞ւր պէտք է գնայ ինքը։ Եթէ սիրտս ճանապարհորդել ուզենար, ես առաջուց կորոշէի թէ նախ դէպի ո՞ր կողմը պիտի ճանապարհ ընկնեմ։ Մ'իթէ քեզ համար բոլորը մէկ է, եթէ քեզ տանեն Եւրոպա, Ասիա կամ Աֆրիկա։

— Ո՛չ, մայրիկ, բոլորը մէկ չէ, ես ամենից առաջ կը ցանկայի նաւել Ատլանտեան ովկիանոսի վրայ։

— Այո՛, որ դեռ ճանապարհի կէսին չը հասած յետ դառնայիր, վրայ բերեց տիկին Հարֆիլդը, քո հասակի տղաները շատ անգամ չը գիտեն թէ, ինչ է իրանց ուզածը։

— Ես, մայրիկ, գիտեմ թէ՝ ինչ եմ ուզում, ձայն տուեց տաքացած Ջէմսը, ինձ խիստ հետաքրքրում է իմանալ թէ ինչպէս են ապրում նաւի վրայ. եթէ դիւր չի գալ, յետ կը դառնամ։

— Է՜, եթէ կընկնես Մ'իչերկրական կամ Չինական ծովը՝ այդպէս շուտով չի լինիլ յետ գալը. և դու շատ կափսոսաս, որ չը լսեցիր մօրդ խորհուրդին, վերջացրեց խօսքը տիկին Հարֆիլդ, որի ձայնը ակամայ դողաց։

Ջէմին, հաւաքեց իր դոյքը՝ մի փոքրիկ տոպրակ, շորեր և ճերմակեղէն, եկաւ մօրը մնաս բարով ասելու։

Երկու օրուայ մէջ հազիւ 17 մղոն ճանապարհ գնալուց յետոյ, երրորդ օրը կէսօրին նա արդէն կանգնած էր կապոյտ լճի ափին։

Հարֆիլդն իսկոյն գնաց մօտ եղող նաւի վրայ և դառնալով առաջին հանդիպած նաւաստիին առաջարկեց, թէ կընդունեն արդեօք իրան իբրև թիավար։

— Սպասիր, հիմա նավապետը դուրս կը գայ ներքնատնից, կը հարցնես, պատասխանեց նաւաստին։ Եւ հէնց այդ միջոցին մի ձայն լսուեց.

—Նաւապետը գալիս է։

Նաւի ներքնատնից բարձրացող մի բան գռնչաց ու ճռնչաց, ապա լսելի եղաւ, կարծես, մի հաւաւոր գազանի ծանր քայլուածք նաւի տախտակամածի վրայ, որը հայհոյանք էր թափում նաւաստիներից մէկի վրայ։

Հարֆիլդը շտապեց շուրջը նայեց և տեսաւ, որ մութ ներքնատնից մարդի թէ տակառի պէս մի բան ուղիղ դէպի իրան է գալիս։

—Դո՞ւք էք նաւապետը, հարցրեց Ջէմսը քաղաքավարի բարուվարքով։

—Ես եմ, ինչ ես ուզում։

—Արդեօք ձեզ թիավար հարկաւոր չէ՞. ես վարձաւոր եմ։

—Տեղդ ճանաչի՞ր, լակոտ. իսկոյն դո՛ւրս այստեղից, ապա թէ ոչ ես քեզ կը ցոյց տամ։

Ջէմսը ուզում էր ներողութիւն խնդրել, բայց նավապետը շարունակեց.

—Դո՛ւրս կորիր. լսո՞ւմ ես թէ չէ։ Դեռ կաթի հոտ է գալիս բերանից, սա եկել է թիավար դառնալու, կարծես, իմ նաւը չոլումն է գտած, որ քո պատճառով ընկղմուի. կորի՛ր ասում են քեզ։

Հարֆիլդի համար այն աստիճան ծանր թուեց նաւապետի խօսքերը, որ նա սկսեց փախչիլ և միայն այն ժամանակ ուշքի եկաւ, երբ արդէն ափին էր հասել, ուր գերաններ կային ածած, նա նստեց նրանց վրայ և երբ քիչ հանգստացաւ, հանեց տոպրակից իր պաշարն ու նախաճաշեց։ Դառն էր նրա սթափումը։ «Եթէ բոլոր նա-

ւսպետները սրա նման են, դատում էր ինքն իրան Ջէմսը, այն ժամանակ ուղիղ որ շատ քաղցր չի կարող լինել ծովի վրայ կեանքը։ Բայց կարելի է ես ներկայանալու ձևը չիմացայ. ինձ պէս վատ հագնուածին, գրեթէ ոտաբոբիկին՝ ի հարկէ, կարող են մուրացող տղայի տեղ ընդունել։ Կարելի է, պէտք էր ասէի՝ ես կալուածատէրը, վաստակաւոր եմ, գիտեմ կալաքար հալեցնել, ամբարներ շինել։ Ոչ, մենակ ես ինքս եմ մեղաւոր. ուրիշ կերպ հարկաւոր էր ներկայանալ»։ Նախաճաշիկը վերջացնելուց յետոյ Հարֆիլդը սկսեց ման գալ նաւահանգստի եզերքին և այժմ չը գիտէր իր անելիքը։ Յանկարծ նա մի ծանօթ ձայն լսեց, որ կանչում էր. «Ջէմս, Ջէմս»։

Յետ նայեց տեսաւ, որ լճից Հանած Ջրանցքի վրայ լողում էր մի նաւ, որի ծայրին ընկած ծիծաղելով բարևում էր երիտասարդ Ամոս—Լետչերը՝ Հարֆիլդի մօր եղբօր որդին. ինչ տաել կուզի, նրանք սկսեցին խօսակցիլ. Ջէմսը Հաղորդեց Ամոսին նաւապետի ընդունելութիւնը։ Իսկ Ամոսը ծիծաղեց շատ և առաջարկեց մտնել իր մօտ իբրև «գրատուավար»։

— Ինչպէս, գոչեց Հարֆիլդը, մինթէ նաւը քոնն է։

— Այո՛, ես եմ նաւի տէրը, մենք Պեռսբուրգից սղոնձի հանք ենք կրում. նաւը թիավարվում է, բացի այդ, ափի վրայից քարշ են տալիս նրան չորս ջորի։

Այդ գրատուների համար մենք քշողներ ունինք, նրանք հերթով են բանում. մինչև մէկի հանդստանալն ու ուտելը և իր երկու ջորիներին կերակրելը միւսը քշում է երկրորդ գոյգը։ Գրատուավարը ստանում է մեզանից ամսական 12 դէնար։

—Ես համաձայն եմ այդ տեղը բռնելու, նաւապետ Լետչեր, պայմաններն ինձ համար ձեռնտու են, կաշխատեմ ձեզ լաւ ծառայել, ասաց Ջէմսը։

— Իսկ ես աւելորդ բան ձեզնից չեմ պահանջիլ, պատասխանեց նաւապետը նոյն հանդիսական ձևերով, վաղ առաւօտ մենք ճանապարհ կընկնենք. չի կարելի ժամանակ կորցնել։

— Շատ լաւ։

Այն միջոցին մի ահագին Ջրանցքով միանում էր երիս լիճը Օգիո գետի հետ։ Վերին լճի մօտ էին գտըն-

վում պղնձի հարուստ հանքերը, որոնց տեղափոխում էին Կլեվելանդ, իսկ այստեղից նաւերով տանում դէպի Պետրսբուրգ ջրանցքի միջոցով։



Ջհմին «Երեկոյեան աստղ» նաւի զբաստավաը։

Լեռչերի նաւի անունն էր «Երեկոյեան աստղ». նրա վրայի նաւորդներն էին՝ մի նաւապետ, մի ուղեցոյց, երկու ղեկավար, երկու գրաստավար և մի խոհարար, ընդամենը եօթը հոգի։ Ուղեցոյցի պարտաւորութիւնն էր

այնպէս առաջ տանել նաւը, որ ուրիշ նաւերին չը դիպչէր և զգուշութեամբ անցնէր սահանքներից։ Բացի նաւապետից, միւսները Հարֆիլդի համար անյարմար ընկերակիցներ էին, նա կեանքի փորձութեան մէջ ընկաւ։

Յաջորդ օրը նաւապետը արշալուսից առաջ վերկացրեց բոլոր մարդկանց։ Ջէմսին յոյց տուին ինչ որ նա պիտի անէր և զգուշացրին, թէ այսօր ճաշից յետոյ պէտք է անցնենք առաջին սահանքից։ Ջէմսը ինչպէս հերթական գրաստավար պէտք է առաջ ինքը գնար պարանի միջոցով։ Սկզբնաւորութիւնը լաւ էր, բայց յանկարծ հեռուում մի բեռնակիր նաւ երևաց, որ ուղիղ դէպի նրանց էր գալիս. պէտք էր այնպիսի ճարտարութիւնով շրջան անուէր, որ պարանները իրար չը խառնուէին, մանաւանդ որ կամուրջ էլ կար։ Ջէմսը աճապարելուց սկսեց չափազանց արագ վրայ տալ պարանը, խիստ պինդ ձգեց և յանկարծ ձեռից բաց թողեց, դեռ ուշքի չեկած մէկ էլ նրա երկու ջորին և ինքն ընկան ջրի մէջ։ Սարսափելի աղաղակ բարձրացաւ. նաւապետը շուարուեց՝ նաւի վրայի բոլոր մարդիկ իրանց ջուրը ձգելով օգնութիւն հասան խեղդուողներին։ Սակայն այս անդամ փորձանքը յաջող անցաւ. գրաստավարին բարձրացրին նաւի վրայ, իսկ ջորիներին ափը դուրս բերին։ Դրանից յետոյ ծիծաղ խընդումին և կատակներին վերջ չը կար. ինքը Հարֆիլդն էլ ծիծաղելով ասում էր թէ՝ ինքն առաւօտեան բաղնիսն արաւ, որից այժմ շատ հովացաւ։ Սակայն նրա ծաղրածու ընկերները երկար ժամանակ նրան հանգիստ չէին տալիս։—Մեր տղէն ուզում էր ջորիներին լողացնել, հա, աղաղակում էր մէկը։

—Մենք, եղբայր, միշտ այդպէս ենք վարժեցնում աշակերտներին, ասում էր մի ուրիշը։

Ջէմին էլ իր կողմից էր ուրախ հանաքներ անում, նրա ջուր ընկնիլը բոլոր նաւողների համար ամբողջ օրը ուրախութեան առիթ եղաւ։

Երբ որ նաւը մօտեցաւ առաջին սահանքին, նաւապետը զգուշութեան համար հրամայեց Հարֆիլդին իր գրաստներով մտնել նաւը և մէկ ուրիշ աւելի փորձառու գրաստավարին պատուիրեց նրան փոխանակել։

Ամբողջ այդ երեկոյեան նաւապետը և աշկերտ նա-

ւաստին սկսեցին խօսել ամիրրիկական անտառներում գըտնուած գպրոցների վրայ։ Բանից դուրս եկաւ, որ Լետչերը նախ քան նաւապետի պաշտօն մտնելը՝ եղել է Ինդիանայում ծխական գպրոցի ուսուցիչ, նա դրանով շատ էր պարծենում և իրան շատ կրթուած մարդ համարում։

XIII

Նաւը մօտենում էր Ակրօն գետի քսան սահանքներին։

—Բայէք առաջին սահանքը, հրամայեց նաւապետը ուղեցոյցին երեկոյեան տասը ժամին։

—Պատրաստ է, ձայն տուեց ուղեցոյցը։

—Մի բանաք, մեր մակոյկը գալիս է, յանկարծ մութի մէջից լսուեց մի ուրիշ ուղեցոյցի ձայն հակառակ նաւից։

—Պէտք է բանամ, մենք առաջ ենք հասել, գոռաց «Երեկոյեան աստղի» ուղեցոյցը։

—Չեմ յանդգնիլ. կը տեսնենք ո՛վ է զօռով, աղաղակեց հակառակորդ նաւի ուղեցոյցը։

Պարզ երևում էր թէ երկու նաւերը պատրաստ էին կռուելու։ Գետագնացութեան օրէնքով առաջին մօտեցողի իրաւունքն էր ամենից առաջ մտնել. իսկ եթէ դըժբախտաբար պատահում էր, որ միաժամանակ երկու նաւեր հակառակ կողմերից դէմ էին ընկնում սահանքին, այն ժամանակ ուղեցոյցների մէջ խօսք ու զրոյց էր լինում և հասնում էր շատ անգամ տուր ու դմբոցի։ Այդ դէպքերում նաւապետի հեղինակութիւնը ոչինչ նշանակութիւն չունէր. նրան ոչ ոք չէր լսում։ Այդպէս պատահեց և այժմ։ Երկու ուղեցոյցները բարկութիւնից դողալով պատրաստ էին միմեանց վրայ յարձակուել, ինչպէս վայրի գազաններ։ Հարֆիլդի համար այդ չը տեսնուած տեսարան էր. առջի բերան համարեա թէ վախեցաւ, վերջապէս ուշքի եկաւ և մօտենալով նաւապետին խփեց ուսին և ասաց.

—Դու ի՞նչ կասես, նաւապետ, սահանքները մե՞րն են։

—Օրէնքով ոչ, պատասխանեց Լետչերը, բայց մենք առաջ կը մտնենք։

—Ոչ, չենք մտնիլ, համարձակ ասաց Ջէմսը։

— Պատճառ, զարմացած Հարցրեց Նաւապետը:

— Որովհետև մենք սեպհականատերը չենք այստեղ:

— Ուղիղ ես ասում, եղբայր, այդ խելքս չէր էլ կարում. տղերք, սալասեցէք, գոչեց Նաւապետը, ճանապարհ տուէք միւս պակոյկին . . .

Նաւաստիները չը համարձակուեցան ընդդիմանալ և դրծը վերջացաւ առանց տուր ու դմբոցի: Այդ մի յաղթանակ էր Հարֆիլդի համար, բայց նաւաստիների հասկացողութիւնով սարսափելի անպատուութիւն «Երեկոյեան աստղի» համար:

«Երեկոյեան աստղի» բոլոր մարդիկ գլխովին պարծենում էին իրանց երիտասարդ գրաւչատաւարով. նրա ուրախ, անդորը բնաւորութիւնը, նրա պատրաստականութիւնը ամեն ցեխոտ դործ կատարելու հաւասար միւսներին, նրա սիրալիր վարմունքը իր ընկերների հետ, նրա խիստ կարգապահութիւնը նաւապետի առաջ, այդ ամենը Ջէմսին խիստ բարձրացրին հասարակ և տգէտ նաւաստիների աչքում. բացի դրանից կառավարչից սկսած մինչև յետին թիավարն անկեղծօրէն սիրում էին նրան և թանդ էին գնահատում նրա ամեն մի խօսքը: Գրատախտակութիւնից նրա պաշտօնը փոխեցին ղեկավարի:

Նաւի վրայ, ի հարկէ, դրքեր չը կային, որի համար և Հարֆիլդը շատ էր տխրում: Միակ նրա մխիթարութիւնը այն հատ ու կտոր լրագիրների ընթերցանութիւնն էր, որ առնում էր նաւապետը այն տեղերում, ուր նրանք իջնում էին, Հարֆիլդը այդ լրագիրները կարդում էր առաջին տողից սկսած մինչև վերջինը: Սակայն այդ երեք ամսուայ ընթացքում՝ որ նա անցկացրեց նաւի վրայ, դրքերի չը լինելը զարգացրեց նրա մէջ արտաքոյ կարգի դիտողական ընդունակութիւնը: Վերջը նրա բարեկամներից շատերը սկսում էին, որ Հարֆիլդը իր կեանքի մէջ ուշադրութիւնով պարտական է այն հանգամանքին, որ նա փոքրութիւնից սկսեց աւելի ուսումնասիրել «մարդկանց քան թէ դրքերը»:

Ջէմսին ջրանցքի վրայ, կարծես, տարօրինակ ճակատագիր էր հետևում: Նաւելիս մօտ 14 անգամ նա ջուրն ընկաւ: Այս հանգամանքը չը պէտք վերագրել նրա դանդաղկոտութեանը, որովհետև նա նշանաւոր մարմնամարզ

էր, ճկուն էր և ուժեղ—կատարելապէս անտառի սրդի։ Պատճառն այն էր, որ մեծ ուշադրութիւնով նայելով իր ջորիներին մոռանում էր իրան և միայն նրանց վրայ հոգալով՝ յաճախ պարանի տակն էր ընկնում, որը նրան ձգում էր ջուրը։ Վերջին անգամ նրա ջուրն ընկնելուց, քիչ մնաց նրա կեանքը մահուան կուր գնար։ Ահա թէ ինչպէս պատահեց այդ բանը։ Ամբողջ գիշերն անձրևում էր, ղեկավարելու հերթը Ջէմիինն էր. նրան արթնացրին։ Նաւը նոր էր դուրս եկել երկար տղմոտ ջրաւազուտից, որից շատ կար Օգիո—Փենսիլվանի ջրանցքում, և մօտեցել էր սահանքին։ Ջէմսը խոր քնի մէջ էր, երբ նրան վեր կացրին. նա որոշ չէր գիտէր թէ ինչ է իր անելիքը. այնուամենայնիւ ելաւ նաւի վերնահարկը և կանգնելով ղեկի մօտ սկսեց դանդաղ կերպով հաւաքել պարանը, որպէս զի սահանքով անցկացնէ մակոյկը։ Պարանը՝ տախտակամածի վրայ բռնուելով, երկար ժամանակ չը կարողացաւ հաւաքել։ Ջէմին ոյժը կրկնապատկելով պոկեց, բայց չը կարողացաւ ոտը տեղը պինդ բռնել և մի ակընթարթում ջուրն ընկաւ։ Շուրջը ոչինչ չէր երևում. նաւը կամաց յառաջ էր լողում, նաւաստիներից ոչ մէկը չէր էլ կարող գուշակել պատահածի մասին։ Հարֆիլդի կորուստը անխուսափելի էր։ Ահից ուշը կորցնելով նա բոլորովին անգիտակցաբար ձեռը հանեց ջրի տակից և յանկարծ նրա մատերը շօշափեցին պարանի հաստ օղը։ Դրժուար չէր նրա համար պարանից բռնելն ու իսկոյն նաւի վրայ բարձրանալը։ Այսպէս էլ արաւ։ Բայց ինչպէս էր պարանի ծայրը օղաւորուել, որ այնպէս պինդ բռնուած էր նաւի վերնայարկում, Հարֆիլդը չը կարողացաւ հասկանալ։ Նրա մազերը բիզ-բիզ էին կանգնում, երբ մտածում էր եթէ այդ հրաշքով պրծնելը չը լինէր, նա կը կորչէր փխրուն և տղմոտ անդունդի մէջ ու ոչ ոք նաւից չէր իմանալու նրա ինչպէս անյայտանալը։ Եւ ասում էր.

—Հրաշք կատարուեց ինձ վրայ։ Երևի իմ կեանքը հարկաւոր է մի ուրիշ աւելի օգտակար գործի քան նաւաստիի կոչման։ Ձեռք կը վերցնեմ ես այս մեքենանեըից, աւելի լաւ է զբաղուիմ իմ կրթութիւնով և սփոփեմ իմ անգին մօրս։ Վշտացրի ես նրան, չը լսեցի նրա խորհուրդները։ Ի՞նչ կը լինէր խեղճի հալը, եթէ ընկղմէի։

Տուն և մօրը մօտ վերադառնալու դիտաւորութիւնն այլ ևս Հարֆիլդի գլխից չէր դուրս գալիս։

Սակայն Հարֆիլդը թագուն պահեց իր ընկերներից այն ամենը ինչ որ պատահել էր և նոյն իսկ նաւապետից էլ. բայց գիշերային ակամայ լողացումը չրանցքի ճահճային հոտած ջրում աժան չը նստեց Հարֆիլդին, մաշող տենդ ստացաւ նա, կատարեալ ուժաթափութիւն տիրեց նրան և նա անկողին մտաւ։ Մի քանի շաբաթ պառկելով և զգալով՝ որ չէ կարող առողջանալ այս վատառողջ տեղում, Ջէմսը վճռեց խնդրել նաւապետին արձակել իրան տուն գնալու։ Նաւապետը ուղղակի ասաց, որ ինքը շատ ցաւում է նրա մեկնելովը, բայց և այնպէս շատ գոհ է, որ Ջէմսը մի ուրիշ աստպարեզ կընտրի իր համար և շատ հաւանական է, որ փառաւոր և մեծ յաջողութիւն էլ կունենայ։

—Եթէ ես քո տեղը լինէի, ասաց նա, վաղուց թողած կը լինէի ամեն բան և ուսման եռանդից կընկնէի։

Աւելորդ է ասել, որ ընկեր—նաւաստիներն էլ շատ տխրեցան Ջէմսի գնալու վրայ. բայց և այնպէս նրանք էլ տեսնում էին, թէ տենդը նրան բոլորովին ոյժից ձրգել է, աւելի մնալ չրի վրայ, կը նշանակէ մահուան դատապարտել իրան։ Նաւապետը հաշիւ տեսնելուս Հարֆիլդին տուեց 14 դենար ամսական գրաստավարութեան համար և 18-ական դենար ղեկավարութեան համար։ Ջէմսը բաւական փող ունէր բայց նա ուշադրութիւն չէր դարձնում նրա վրայ։ Նա թոյլ էր և տկար ու պէտք էր տուն հասնէր ոտով։ Տենդը այն աստիճան աւերել էր նրա ջղերը, որ նա աւելի նման էր մի մանուկի քան թէ երիտասարդի. մայրը միտը գալուն պէս նրա լացը գալիս էր, անհամբեր սպասում էր նրա տեսութեանը և միևնոյն ժամանակ վախենում էլ էր նրանից։ Նրան թուում էր, որ մայրը կը բարկանայ իր վրայ, թէ ինչու նա չը լսեց իրան և գնաց ծովային պաշտօն վարելու։ Բացի դրանից երեք ամսուայ ընթացքում նա ոչ մի լուր չէր հաղորդել իր մասին։Ինչ և իցէ ահա վերջապէս երևացին ծանօթ տեղերը, ահա և «փայտաշէն խրճիթը»։

Ծառերի միջից փայլում էր կրակը. Հարֆիլդը քայլերը արագացրեց, մօտեցաւ պատուհանին և նայեց ներս.

մայրը ծունդ չոքած, ձեռները կրծքին ծալած, աչքերը դէպի երկինք ուղղած աղօթում էր . . .

Հարփիլդը ներս նետուեց, մայրն ու որդին ուրախութեան արտասուքն աչքերին իրար գրկեցին . . . .

XIV

—Ջէմս, հոգիս, երեսիդ գոյնը թռել է. կարելի է հիւանդ ես, գոչեց տիկին Հարփիլդը, երբ սաստիկ ուրախութեան առաջին տպաւորութիւնն անցաւ։

—Այո՛, մայրիկ, ես հիւանդ եմ, և այդ է պատճառը, որ յետ եմ եկել տուն, բայց թէ ինչպէս եմ եկել մինչև մեր խրճիթը՝ ինքս էլ չը գիտեմ։ Այժից ընկել եմ բոլորովին։

Մայրը՝ նրան կրակի մօտ նստեցնելով, ինքը շտապեց ընթրիք պատրաստելու։

Ջէմին ժպիտն երեսին դիտում էր մօրը և խիստ գոհ էր, որ ինքը տանն է։ Նա սփոփում էր սիրտը պատմելով ամեն բան, ինչ որ անցել էր իր գլխովն այն երեք ամսուայ ընթացքում, ապա նկարագրեց և այն վերջի գիշերը, երբ մի մազ էր մնացել, որ նա ընկնէր մահուան ճանդը։

Վախենալով իր սիրելի հիւանդի չափազանց յոգնած լինելուց՝ տիկին Հարփիլդը համոզեց նրան շուտ պառկել։

Այդ գիշերը խեղճ մօր համար ամենաերկարատեւ գիշերներից մինն էր. նա ուրախութիւնից չը կարողացաւ աչքը խփել, շարունակ աղօթում էր և շնորհակալ լինում Աստուածանից և մի քանի անգամ մտաւ որդու սենեակը, որ տեսնէ քնած է արդեօք։

Ջէմսը գիշերը հանգիստ քնեց, առաւօտը զարթեց բոլորովին զուարթացած, թէպէտ թուլութեան պատճառով չը կարողացաւ տեղից վեր կենալ։ Ձահճային —տենդը ցաւալի բան է. երկու օր չանցած, Ջէմսի հիւանդութեան նշանները դարձեալ երևացին և նա պառկած մնաց ամբողջ աշունը։ Նրա ձախ կողքին ցաւ էր տուել։ Ի՞նչ նեղութիւններ քաշեց այդ միջոցին տիկին Հարփիլդը՝ անկարելի է երևակայել. իր վերջին կոպեկները տալով բժիշկներ էր հրաւիրում ամեն կողմից։

Ջէմսը ամեն օր դէլն էր տալիս, նա իրան մին վայտահատ էր երևակայում, մին նաւաստի։ Տեսնելով որ որդու դրութիւնն օրէ ցօր վատթարանում է, տիկին Հարֆիլդը որոշեց յանձնել նրան ընուէեան խնամքին և դադարեցրեց դեղեր գործ ածելը։ Այդ հնարը շատ օգնեց։ Զրօրհնէքին Ջէմսը ամրապնդուել էր. արդէն կարողանում էր սխորժակով ուտել, լաւ քնել. այլ ևս պատկած չէր մնում, այլ նստում էր ժամերով մօր մօտ, որ շարունակ առաջուան պէս կարում ու մանում էր անպարապ։ Շատ անգամ նրանք խօսում էին այն բանի մասին, թէ ինչ գործի նուիրէ իրան Ջէմսը։ Տիկին Հարֆիլդը ելի պնդում էր, որ նա կամ ուսուցիչ, կամ քարոզիչ թողդառնայ։

Դեկտեմբերի վերջին տեղական դպրոցի համար նոր ուսուցիչ եկաւ անունը Տէր-Բաթս։ Տիկին Հարֆիլդը լսել էր իր հարևաններից, որ այդ մարդը շատ գործունեայ, ուսեալ և բարոյական է։

Տիկինը ծանօթացաւ նրա հետ։ Տէր-Բաթսը ամեն երեկոյ գնում էր նրա տունը. սա շատ սիրեց Ջէմսին և առաջարկեց նրան տանը դասեր վերցնել, որովհետև հիւանդը դեռ ևս բաւական թոյլ լինելով չէր կարող դպրոցում զբաղուել։ Նրա առողջութեան լաւանալուն հետ առաջ էր գնում և նրա կրթական պարապմունքը։

Տէր-Բաթսը աշխատասէր տիկնոջ հաւատարիմ օգնականն եղաւ։ Նա ամեն կերպ ջանք էր գնում երիտասարդ Հարֆիլդին յետ կացնել նաւաստի լինելու յամառ մտադրութիւնից. բայց թւում էր, թէ զուր ջանք էր թափում։ Սակայն ինչպէս եղաւ իր հիացումը, երբ մի երեկոյ ընթրիքից յետոյ անակնկալ կերպով Ջէմսը սկսեց խօսել, որ իրան անհրաժեշտ է բարձրագոյն ուսման ետևից ընկնել։

—Լաւ բան ես մտածել,— գոչեց ուրախացած Բաթսը —Էլ երկար խորհել պէտքը չէ. մարտի սկզբին միասին կերթանք Չեսթէր, որտեղ դուք կը մտնէք ուսուցչական դպրոց։ այնտեղից ձեզ համար բացուած կը լինի բարձրագոյն կրթարաններ մտնելու ճանապարհը։

—Թող այդպէս լինի. կերթանք Չեսթէր, պատասխանեց Հարֆիլդը։

—Դուք, իրաւի համաձայն էք, հարցրեց Բաթսը, տեսէք յետ չը կենաք ձեր խօսքերից. այդ ձեր կեանքի մէջ նշանաւոր փոփոխութիւն է։ Դպրանոցում տպրելու համար միջոցների վրայ դուք հոգս մի՛ քաշէք, այդ հեշտ բան է, դժուարն այդ խնդիրը լուծելն էր։

—Իմ մօտ բաւական փող կայ ժողոված, ասաց տիկին Հարֆիլդը, ես էլի կը ճարեմ մի քանի դեներ և այդ քեզ հերիք կանի։

—Բայց, մայրիկ, ես կարծում եմ, որ այնտեղ կոմունակի աշխատանք կը գտնեմ շաբաթ օրերը, ասաց Ջէմսը, դու անհանգիստ մի՛ լինիր, ապահով եմ. պէտք է խօսել Ուիլեամ և Դարրի Բօյտօնների հետ, կարելի է, նրբանք էս ցանկանում են մտնել դպրանոց, այն ժամանակ ճաշն ու բնակարանն աւելի աժան կը նստի։ Ինչքան ուրախացաւ տիկին Հարֆիլդը, երբ տեսաւ թէ իր հանապազօրեայ վախտը վերջապէս կատարվում է։ Բօյտօնի որդիքը՝ շուտով խորհրդակցելով իրանց ծնողների հետ, յայտնեցին, որ իրանք նոյնպէս կը մտնեն դպրանոց և կապրեն Ջէմսի հետ։

Այն ինչ պատրաստութիւնները էին տեսնվում երեք երիտասարդների Զեստէր ճամբելու՝ լուր տարածուեց, որ այն ժամանակուայ հռչակաւոր բժշկապետ Ոօբինզօնը Բօդֆօրտից եկել է Հարֆիլդին հարևան գաղթականներից մինի մօտ հիւանդներին նայելու։ Ջէմսը մտքումը դրեց մօրից ծածուկ գնալ տեսնուիլ բժշկի հետ ու հարցնել՝ թէ արդեօք կը ներէ իր առողջութիւնը բաւական դժուար ուսման ընթացքն աւարտելու, ի նկատի ունենալով և այն զրկանքները, որ նա պէտք է կրէ։ Այդ թէ ինչպէս է նկարագրել ինքը Ոօբինզօնը այս տեսակցութիւնը Միացեալ—նահանգների ապագայ նախագահի հետ. «Իմ առաջ կանգնած էր, ասում է նա, մի վատ հագնուած պատանի. կոշտ կտաւի կարճլիկ վարտիքը հազիւ հասնում էր կովէ կաշուից կարած կօշիկներին. հագած էր մի վեր-քաշուած նեղլիկ ժիլետ և խիստ մաշուած ու գունաթափ վերարկու, որի թևերը հազիւ հասնում էին մինչև դաստակը։ Գլխին ծածկած ունէր մի դուրս պրծած և չարդուած գտակ. երբ իմ մօտ մտնելիս նա գդակը վերցրեց և քաղաքավարի կերպով ինձ գլուխ տուեց, նրա շէկ և թան-

ձըը մազերը թափուեցին ուսերի վրայ։ Ես իսկոյն նկատեցի, որ նա քաշվում է. բայց նրա բաց երեսը և համակրական հայեացքը գրաւեցին իմ համակրանքը դէպի ինքը։»

—Ո՞վ էք դուք հարցրի ես բաւական չոր կերպով։

—Ես Ջէմս Հարֆիլդն եմ, ասաց նա։

—Լաւ, ասում եմ, շատ ուրախ եմ ձեզ տեսնելուս, ձեր մօր հետ ես վաղուց ծանօթ եմ. ես յիշում եմ՝ երբ դեռ պօռլիկ երեխայ էիք։

—Բժիշկ, ես կը կամենայի ձեզ հետ առանձին խօսել, հազիւ լսելի ձայնով ասաց իմ ամօթխած հիւրը։

Ես վերկացայ, տարայ նրան տան մօտի փոքրիկ բակը, նստեցի մի կոճղի վրայ և նրան էլ նստեցրի մօտս։ Պատանին յայտնեց, որ ցանկանում է իրան բժշկական գննութեան ենթարկել—իմանալու՝ թէ արդեօք իր կազմուածքը կը ներէ մտաւոր և ֆիզիքական ծանր աշխատութեան դիմանալու։

Մի քանի րոպէ ժամ գննելուց յետոյ ասացի.

—Դուք կարող էք առողջական երիտասարդ մարդու տիպարը լինել։ Ձեզ հարկաւոր է միայն աշխատել. աշխատեցէք, ինչքան կարելի է, շատ, ձեր կազմուածքը կը տանի։ Ես նախագուշակում եմ, որ դուք նշանաւոր մարդ «կը դառնաք»։

XV

Մարտի հինգին՝ դասեր սկսելու նախընթաց օրը, Ջէմսը և իր մօրաքրոջ որդիքը ոտով ճանապարհ ընկան դէպի Չեստեր. նրանք բեռնաւորուած էին զանազան պիտանի իրերով և իրանց ուտեստի պաշարով։ Թէպէտ մինչև քաղաք տարածութիւնը շատ մեծ չէր՝ ընդամենը տասը մղոն էր, միայն գարնան անձրևներից Օգիօի նահանգի անտառներում ճանապարհները գրեթէ անանցանելի են լինում և այդ պատճառով մեր ճանբորդները բաւական ցեխ կոխ տուին։ Նրանց բեռն էր՝ ճերմակեղէնի մի փոխնորդ, մի փոքրիկ արկղ, որի մէջ կար իւրաքանչիւրի գաւաթը, մի քանի ափսէ, դանակ, պատառաքաղ և դրգալ ու մի

պատիկ կաթսայ իր կասկարանքով։ Բացի դրանից ծնողները նրանց հետ դրել էին բաւականաչափ տանը պատրաստած ապուխտ և հաց։ Ձեստէր հասնելով՝ նրանք ուղղակի գնացին գպրանոցի վերատեսուչ Դանիէլ Բրէնչի մօտ, որ թէև մի տարօրինակ, բայց շատ յարգելի մարդ էր։

—Պարոն, մենք եկած ենք Օրանժի գետափից, ասաց Հարֆիլդը գլուխ տալով. մենք ցանկանում ենք մտնել ձեր գպրանոցը։

Հարցնելով նրանց ազգ-աննունները ծերունին յայտնեց, թէ ինքը շատ ուրախ է, որ նրանք ուսանելու փափագ ունին։

—Դուք, պարոննե՛ր, երևում է մեր միւս ուսանողներից հարուստ չէք, ասաց վերատեսուչը նրանց՝ ոտից մինչև գլուխը զննելով։

—Պարոն, խնդալով ասաց Հարֆիլդը, մենք այստեղ ենք եկել ոչ թէ ոսկով-արծաթով բեռնաւորուած, այլ գաւաթներով, կաթսաներով և տնայինն պաշարով։

—Ուրեմն դուք կամենում էք ձեր տնտեսութիւնով ապրել, հարցրեց Բրէնչը։

—Այո՛, պարոն, չէ՞ք կարող արդեօք մեզ ցոյց տալ մի յարմար ու աժանագին բնակարան։

Գպրանոցից երեսուն քայլ հեռու մի հին տան մէջ մէկ պառաւ ալրի կին սենեակներ էր վարձով տալիս։ Բրէնչը մեր երիտասարդներին ուղարկեց այնտեղ, ուր շատ աժան գնով վարձեցին մի սենեակ իր օջախով, մի քանի հին աթոռներով և երկու մահճակալներով։ Բանալով իրանց իրեղէնները՝ նրանք իսկոյն սկսեցին ճաշ պատրաստել։

Դասերն սկսուելուն պէս Հարֆիլդը չեմ կերպով սկսեց ուսումնասիրել քերականութիւնը, թուաբանութիւնը, բնական փիլիսոփայութիւնը և հանրահաշիւը։

Առաջին անգամ գտնուելով հարիւրաւոր պատանիների և օրիորդների մէջ, որոնք իրանից աւելի մաքուր էին հագնուած, Հարֆիլդը բաւական քաշվում էր. իբրև էլ ամօթխած լինելով, նա բոլորովին իրան կորցրեց ուսանողուհիների առաջ. սակայն ուսման ծարաւը յաղթեց երկչոտութեանը, նա խորասուզուելով իր գբաղմունքների մէջ՝ այլ ևս ուշադրութիւն չը դարձրեց իր շրջապատող-

ների վրայ։ Մեր նորեկները բաւական յաջողութիւնով յառաջ էին տանում իրանց տնտեսութիւնը, բայց ճաշի յետևից ընկնելու հոգսերը նրանց խիստ ձանձրացնում էին և ժամանակ խլում. ուստի երկու շաբաթից յետոյ նրանք խոհանոցի բոլոր գործերը յանձնեցին պառաւ տան տիկնոջը, որ յանձն առաւ և նրանց ճերմակեղէնի լուանալը։ Ինչքան էլ որ Հարֆիլդը և իր ազգականներն աշխատում էին տնտեսաբար վարուել, բայց այնուամենայնիւ նրանց փողերը հատնում էին։ Գրքեր և մի քանի այլ իրեր գնելու համար Ջէմսի փողերի մեծ մասը գնացին։

—Պէտք է այլ պարապմունք ճարել, յայտնեց Ջէմսը Բօյտօն հարազատներին, ապա թէ ոչ ես շուտով կը սնանկանամ, մի քիչ յետոյ իմ 11 դենարից քիչ բան կը մնայ։

—Ե՛հ ինչ պարապմունք կարելի է գտնել այսպիսի պտիկ քաղաքում, պատասխանեց Ուիլեամ Բօյտօնը։

—Թէ կուզ հէնց հիւսնութիւն. այս օրերս ես տեսայ Վուդվօրթ հիւսնի յուշանակազիրը, կը գնամ նրա մօտ բախտս կը փորձեմ։

Միւս օրը դասերից ազատ ժամերին Հարֆիլդը գնաց Վուդվօրթի մօտ և պարզ սրտով խոստովանեց, որ ինքը Չեստէր է եկել 11 դենար միայն գրպանում. իսկ այժմ պէտք է տան վարձ տալ, գրքեր գնել, կերակրուել—մի և նոյն փողերով։

—Սկէք դասերիդ յետոյ, տեսնենք ինչ կարելի է անել ձեզ համար ասաց հիւսնը։

Դպրանոցի մատենադարանը մեծ բաւականութիւն էր պատճառում Ջէմսին. այնտեղ վիպասանութիւնները և բանաստեղծական գրուածքները թէև չը կար, բայց գիտութեան զանազան ճիւղերին վերաբերեալ գրքեր շատ կային։ Հարֆիլդը շատ անգամ զրկելով իրան քնից, գիշերուայ մեծ մասը նստած ծանօթանում էր ուսումնական գրքերի հետ։

Դպրանոցում սովորութիւն կար, որ տաներն ամիսն երկու անգամ հրապարակով պէտք է կարդային իրանց շարադրութիւնները, որոնց նիւթը կամ տեսուչն էր ընտրում կամ հէնց իրանք։ Դրա համար դահլիճում ամ-

բիոնի պես մի բարձր տեղ էր շինած, որտեղից կարդացողը լաւ երևում էր ամենին։

Ոչ մի սարսափելի կռուի մէջ Չէմսը այդ աստիճան վեհերոտ չէր եղած, ինչքան երբ առաջին անգամ ամբիոնի վրայ երևաց Հասարակութեան առաջ։

— Բախտս բերեց, ասում էր Հարֆիլդը ծիծաղելով իր ընկերներին, որ ամբիոնի առաջևից վարագոյրը կար կախած, ապա թէ ոչ պիտի տեսնէիք տենդային դրութիւնից ինչպէս իմ ոտները դողդողում էին։

— Ինձանից այդպէս բան չէի սպասում, ասաց Ուիլեամը։

— Թէ այսպէս և թէ այնպէս, բանն այն է՝ որ այսօրուայ պէս ես վախեցած չէի։

— Ի՞նչ վախենալու բան կար, ես հազար անգամ պատրաստ եմ այդպիսի տենդային դրութեան մէջ լինել՝ միայն թէ կարողանայի այդպիսի շարադրութիւն գրել։ Ամենքը զարմացած էին քո շարադրութեան գեղեցկութեան վրայ։

Չէմսը կարդալով նշանաւոր մարդկանց կենսագրութիւնները, որոնք բարձրագոյն ուսում առնելու համար տարել են ամեն տեսակ զրկանք, նա յայտնեց սենեկակիցներին, որ իրանք շատ շուայլ են ապրում և թէ պէտք է օրինակ առնել նկարիչ Բայրից, որ միայն կաթով է կերակրուել Իտալիում գեղարուեստ ուսանելիս։

Բացի դալրանոյի մատենադարանից Չէմսի համար կար և մի առանձին շահաւէտ զբաղմունք, այն է՝ «Դեբատեան ընկերութեան» նիստերը, ուր նշանակած նիւթերի վրայ բնդդիմախօսում էին։ Ընկերութեան անդամ կարող էր գրուիլ ամեն ցանկացող. դալրանոյի տեսուչը խորհուրդ տուեց Հարֆիլդին անդամակցիլ այդ ընկերութեանը, որպէս զի փորձ է զարգացնել իր մէջ բեմբասացութեան տաղանդը։

(Կը շարունակուի)։

Ն. ՏԷՐ ԱՒԵՏԻՔԵԱՆ

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՕԴԱՊԱՐԻԿԻ ՀՆԱՐՈՂՆԵՐԸ

Մօնգօլֆիը եղբայրները ծնուել են Հարաւային Քըրանսիայի Աննօնէյ քաղաքում, ուր նրանց Հայրը Թղթի գործարան ունէր։ Յովսէփը ուսումնարան էր յաճախում, որտեղից 13 տարեկան ժամանակ վտակաւ, մեայն նրան բռնեցին և նորից տարան այնտեղ, բայց երկրորդ անգամ փախչելով գնաց Սեն—Էդեն, ուր ապրում էր շատ ողորմելի աղքատութեան մէջ։ Բաւական ժամանակ անցել էր, որ Հայրը չեաց կանչեց նրան Աննօնէյ և տեղ տուեց իր գործարանում։ Այնտեղ Յովսէփը սկսեց պարապել և մի քանի յաջողութիւնները հնարեց Թղթի արդիւնաբերութեան մէջ։ Իսկ Էդենը ուսանում էր Փարիզում, նա շատ ջանասէր էր, սաստիկ սիրում էր մաթեմատիկան։ Նա արդէն յայտնի էր իր հմտութիւններով, երբ մեայնաւ եղբօր հետ օդապարիկը հնարելու համար փորձեր անելու։

Իսկապէս յայտնի չէ, թէ ինչ բան զարկ տուեց նրանց այդ փորձը սկսելու. այս մասին պատահան կարծիքներ կան։ Մի քանիսը կարծում են, որ Էդենը կարդացել էր Պրեստլէյի հեղինակութիւնը «Օդը և նրա տեսակները» մակագրով գիրքը, որ թարգմանուած էր Անգղիերէնից, և մեևնոյն ժամանակ մտաբերելով թէ ինչ էր կարդացել Սիւրլէր ասրի վրայ չրչելիս, յանկարծ նրա գլխում ծագեց այն մեաքը, որ գազի օգնութեամբ կարելի է օդի մէջ բարձրանալ։ «Այժմ մենք կարող ենք չրչել օդի մէջ», ասաց նա ինքն իրան և հաղորդելով Յովսէփին՝ մեասին սկսեցին գլուխ բերել այդ հնարքը։

Մի քանիսն էլ այնպէս են կարծում թէ՝ Էդենը այն ժամանակ մտածեց օդապնացութեան հնարների մասին, երբ մի անգամ տեսաւ շաալիկը կրակի վրայ տաքացնելիս, նա նկատեց, որ շաալիկը թռչկոտում էր. նա այդ փորձը կրկնեց քաթանից կարած մի փոքրիկ գընտակի հետ, և թէև առաջին փորձն անյաջող անցաւ, բայց հետևեալ փորձերն ամրապնդեցին երկու եղբայրների յոյսը և հասցրին իրանց ցանկացած նպատակին։

Վերջապէս մի երրորդ կարծիք էլ կայ՝ երբ թէ Չերբաւտաբը թղնամիներով պաշարուած դրութեան մէջ էր, Յովսէփը Աւինիօնում մի օր հնոցի առաջ նստած մտածում էր՝ արդեօք ինչ միջոցով կարելի կը լինի օդի միջով անցկենալ մինչև պաշարուած քաղաքը։ Նա խմանում էր, որ շոգին բարձրանալով դէպի օդը լողում է այնտեղ ամպերի նման, խմանում էր նոյնպէս, որ ծուխն էլ բաւական զօրութիւն ունի բարձրանալու, և նա

չինեց մի փոքրիկ սակ քառասուն խորանարդ ֆուտ բովանդակութիւնով, տաքցրեց նրան և տեսաւ, որ սկսեց բարձրանալ դէպի առաստաղը։ Այս պատճառներից որը և լինէր, այնու ամենայնիւ Մօնգօլֆիէր եղբայրների առաջին փորձը պատահական բան չէր, այլ հիմնուած էր այնպիսի նկատողութիւնների վրայ, որոնք մինչ անկատելի են մնում հասարակ մարդկանց համար։ Նրանք հասկանում էին, որ կարելի է շատ ծանր բաները բարձրացնել վերև, եթէ գունտը լցուէը գազով, որ աւելի թեթև է քան նրան շրջապատող օդը, ինչպէս օրինակ՝ դատարկ շիշը լցուած լինելով օդով և ջրից աւելի թեթև լինելով, չի ընկղմում նրա տակ, այլ մնշտ բարձրանում է և լողում է ջրի մակերևոյթի վրայ։ Մնում էր միայն գըտնել թեթև գազ. այդ էլ գտան տաքացրած օդի մէջ։ Երկու եղբայրներն ամեն հաշիւ և ամեն փորձ անում էին փոխադարձ համաձայնութիւնով ու խորհրդով, և երբ համոզւում էին իրանց կարծիքի յաջողութեան վրայ, ահա այն ժամանակ միայն վճռում էին իրանց փորձը հրապարակօրէն ցոյց տալ։

Այստեղ պէտք է նկատել, որ Մօնգօլֆիէր եղբայրները ճշտութիւնով չը բացատրեցին իրանց օդապարիկի բարձրանալու գլխաւոր պատճառը։ Նրանք այնպէս էին կարծում թէ ելէքտրական ազդեցութիւնից էր բարձրանում գունտը և նրա համար գունտը փքելու համար կալցի մէջ մասնաւոր թաթախուած բուրդ էին այրում նրա տակ. հիմնուելով այն կարծիքի վրայ՝ թէ այդ խառնուրդից ազատւում է ելէքտրական զօրութիւնը։

Ֆիղիքայով պարապողներից շատ մասը ընդունեց այդ բացատրութիւնը, և այդ խառնուրդին, որով լցվում էր գունտը, նոր անուն տուին՝ «Մօնգօլֆիէրեան գազ»։ Բայց Փրանսիացի գիտնական Սօսսիւրը գնում բարձրանալը մեկնեց այսպէս՝ երբ թէ նրա (գնտի) մէջ բովանդակուած օդը տաքանալով՝ աւելի թեթևանում է քան դրսի օդը և այդպէս բարձրացնում է նրան դէպի օդը։ Իր կարծիքը փորձով հաստատելու և յարուցուած վէճերի վերջ տալու համար Սօսսիւրը վեր առաւ թղթից շինած մի փոքրիկ գունտ, եռացրած երկաթի ձողով տաքացրեց նրա մէջի պարունակուած օդը և գունտը իսկոյն բարձրացաւ մինչև առաստաղը։

Մօնգօլֆիէր եղբայրները փոքր գունտերով փորձելով իրանց յաջողութիւնը, շինեցին մի մեծը՝ քսան խորանարդ մետրի (մետրը մօտ $1^1/_2$ արշին է) բովանդակութիւնով. և հէնց տաք այրերն նրա մէջ պարունակվող օդը թէ ոչ սկսեց բարձրանալ այնպիսի ուժով, որ կատարեց նրան պնդացրած պարանները և մինչև 300 մետր բարձրութեան հասաւ։ Սրբանից յետոյ նրանք կատարեցին առաջին հրապարա-

կական փորձը յունիսի 4-ին 1783 Թուի Աննոնէյ քաղաքի հրապարակի վրայ։ Գունտը քսան մետր լայնութիւն ունէր, չինուած էր քաթիանէց, իսկ ներքին կողմը կպցրած էր թղթով։ Ահագին բազմութիւն ներկայ էր այս փորձի ժամանակ։ Երբ վառեցին 10 ֆունտ չափ բուրդն ու յարդը, գունտը սկսեց բարձրանալ, սպարաններն արձակեցին և բազմութեան աղաղակի հետ նա մինչև 500 մետր բարձրացաւ, յետոյ նրա մէջի օդը սկսեց հետզհետէ սառչիլ և գունտը կամաց կամաց ցածացաւ հողի վրայ։ Փարիզեան գիտութիւնների ակադեմիան լսելով այս փորձի մասին, հրաւիրեց էդենին Փարիզ, որ այնտեղ էս կրկնէը մեհենոյն փորձը։

Էդենը դեռ էս Փարիզ չը հասած՝ պրօֆեսոր Ֆիզիկոս Շարլը վճռեց օդապարիկի փորձը, բայց չիմանալով թէ Մօնգօլֆիերը ինչ գազով էր լցնում իր գունտը, նա լցրեց ջրածինով, որ 14½ անգամ թեթեւ է օդից։ Գունտը լցնելու համար հարկաւոր էր չորս օր. մեծ բազմութիւն էր հաւաքուել այնտեղ, ուր գունտը պէտք է լցուէը։ Զորրորդ օրը վաղ առաւօտեան տեղապահներին նրան Մարսօվօ դաշտը, որպէս զի ամբոխը շատ չը հաւաքուէը։ 1783 Թուի օգոստոսի 27-ի 5 ժամին նշանակուած էր գնալ բարձրանալը, մինչև երեք հարիւր հազար հոգի հաւաքուած էր այդ հիանալի տեսարանին ներկայ լինելու։ Նշանակուած ժամին ռումբի արձակումը յայտնեց, որ սկըսվում է փորձը և գունտը բարձրացաւ խսկոյն. երկու րոպէից յետոյ նա արդէն երկու հազար մետր բարձրութեան վրայ էր և ծածկուեց ամբոխի աչքից մոյգ ամպերի տակ։ Նա դարձեալ երեւաց ամպերից շատ բարձրը և դարձեալ ծածկուեց ուրիշ ամպերի տակ։ Այդ ժամանակ սաստիկ անձրեւ էր թափվում, բայց հետաքրքրուած ամբոխը չէր էլ մտածում պատսպարուել անձրեւից, ամենքը նայում էին վերև, սպասելով, որ մի անգամ ևս տեսնեն գունտը։ Բայց գունտը չափից առաւել լցցուած լինելով գազով, վերևում, ինչ տեղ փոքրանում է օդի ճնշումը, սկըսեց այնքան ուռչել, որ ճաքուեց և, բարձրանալուց 45 րոպէ, անցած կամաց—կամաց ցած իջաւ հողի վրայ։ Փարիզից հինգ մղոն հեռու գիւղացիք տեսնելով այդ օտարոտի երևոյթը, առաջ շատ վախեցան, իսկ յետոյ երանց վրէժը հանելու համար կապեցին նրան ձիու պոչից, որ քարշ տալով նրա քամակից՝ պատառատեց։

Այդ ժամանակ էդէն Մօնգօլֆիերը հասաւ Փարիզ և պատրաստեց նրա գունտը, որ մի ուրիշ տարօրինակ ձև ունէր։ 1783 Թուի սեպտեմբերի 11-ին գունտը այնքան բարձրացաւ, որքան Թոյլ էին տալիս նրան ամրացրած պարանները, հետևեալ օրը կրկնեց մեհենոյն փորձը դարձեալ ամրացրած պարաններով, այս անգամ 500

Փունա ծանրութիւն վեր էր տանում իրա հետ. բայց այդ մեջոցին սաստիկ անձրևը թրջեց գունաը, իսկ քամին պատառոտեց նրան։ Սեպտեմբերի 19-ին թագուորը հրաւէրով բաց Թողեց Վենսայլից մի նոր գունա, որից ամրացրած էր մի վանդակ և նրա մէջ տեղաւորուած մի ոչխար, աքաղաղ և սագ. այս անգամ բաց Թողեց գունան առանց կապելու, բայց նա երկար չը մնաց օդի մէջ, Ճայթուեց և գունաը վեր ընկաւ Վենսայլից մի մղոն հեռու անտառի մէջ, ինենդաննեներն անվնաս դուրս եկան նրանց Ճանապարհորդական վանդակից։ Մինչև այդ ժամանակ ոչ մի մարդ չէր վստահանում բարձրանալ օդապարիկով. առաջին օդագնացն էր Պիլատր դէ Րոզէնը։ Մօնգոլֆիէրը պատրաստել էր նաև մի այնպիսի գունա, որի մէջ քսան հաստաբուն ծուռ օղ էր պարունակվում։ Այդ գնոից կապել էր նա չղջանեերով փոքրիկ հնոց, իսկ գնալ մօտաքի չուրջը մի տեղ էր շինել, ուր յարդի պաշարն էր։ Հոկտեմբերի 15-ին Պիլատր դէ Րոզէնը առաջին անգամ բարձրացաւ օդապարիկով. երկար պատրաստեերով ամրացրած էր գունաը։ Մի քանի օրից յետոյ այդ փորձը կրկնուեց նորից և Պիլատր դէ Րոզէնի հետ Ճանապարհորդեցին մի քանի մարդիկ էս։

Վերջապէս 1783 թուի հոկտեմբերի 21-ին օրուայ 4 ժամին Պիլատր դէ Րոզէնն ու Մարկիզ դ' Արլանդը առաջին անգամ կատարեցին օդային Ճանապարհորդութիւնը տպատ օդապարիկով. նրանք այնքան բարձրացան Փարիզից, որ քաղաքի ամեն մի նեղ փողոցից էլ կարելի էր տեսնել նրանց գունաը։ Առաջին օդագնացները բարձրանալով վերև, օդի ուղղութիւնով տարվում էին դէպի հարաւ, նրանք հանդցրին կրակը և իջան երկրի վրայ։

Ահա այսպէս հնարուեց ուղիղ հարիւր տարի առաջ անդրանիկ օդապարիկը, որ կոչուեց Մօնգոլֆիէր, բայց յետոյ այդ անունը փոխուեց Շարլներին, այսինքն՝ այնպիսի գնով, որ լցվում էր ջրածինով և ինքը հնարող Շարլը, Պիլատր դէ Րոզէնից յետոյ կատարեց երկրորդ օդագնացութիւնը 1783 թուի դեկտեմբերի 1-ին։

Այդ ժամանակից յետոյ չատ մարդիկ փորձեցին օդագնացութիւնը։ Պատմութեանս վերջում ասելք է նկատեմ, որ Պիլատր դէ Րոզենն ու Մարկիզ դ' Արլանդը առաջին Ճանապարհորդութեան ժամանակ ուղեկցում էր նրանց ամերիկացի երևելի Փիղիկոս Բենիամին Ֆրանկլինը։ Երբ որ հարցրին, Թէ նա ինչ կարծիք ունի օդապարիկի մասին, Ֆրանկլինը պատասխանեց. «Սա մի նորածին մանուկ է և մեծ ապագայ է սպասում սրան»։ Բայց ամսոյս 21 ին ԱՆՑԱՒ ՈՒՂԻՂ 100 ՏԱՐԻ, իսկ օդապարիկը մնաց նոյն մանկական հասակում . . .

ՄԱՐԻԱՄ ՓԱՄՓՈՒՉԵԱՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ

ՀՐԷԱՆԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԸ

Այս տարի Վիլնօ քաղաքի հրէայ ամենաաղքատ դասակարգը մի մեծ կորուստ ունեցաւ։ Վիլնօյի աղքատները զրկուեցան իրանց սիրելի մշտական բարեգործ ու օգնական Րէբ Հերէլից։

Մի նշանաւոր մարդ էր այդ ալևոր ծերունին. ով նրան գոնէ մէկ անգամ պատահած էր՝ երկար ժամանակ չէր կարող մոռանալ նրան. իսկ նրան պատահելը շատ հեշտ էր՝ համարեա թէ իւրաքանչիւր փողոցում։

Մի խօսքով—Րէբ Հերէլը Վիլնօյի քրիստոնեաներից շատերին և համարեա թէ բոլոր հրէաներին ծանօթ էր. նա իր կրօնակիցների համար միշտ ողորմութիւն էր հաւաքում։

Րէբ Հերէլը երիտասարդ հասակում պաղաւաճառ էր։ Հրէական սովորութեան համեմատ հազիւ 18 տարեկան պսակուեց։ Բայց շատ վաղ զրկուեց կնոջից և որդկերանցից և մնաց միայնակ։ Վերջացնելով մրգավաճառութիւնը և իր ամբողջ կարողութիւնն աղքատներին տալով՝ նա ուխտեց ծառայելու իր աղքատ և հիւանդ կրօնակիցներին։ Յետոտիք հագաւ; ձախ կողքին կախեց դանձանակի մի տուփ և սկսեց շրջել իր հայրենի քաղաքի փողոցներում։ Րէբ Հերէլը անշահասէր, աշխատասէր, վերին աստիճանի արդարասէր և զօրեղ կամքի տէր մարդ էր։ Ամբողջ օրեր նա մանր էր դալիս տնէ տուն, խանութէ խանութ և ողորմութիւն էր հաւաքում թէ փողով և թէ իրեղէններով։ Նրա կողովում կարելի էր տեսնել թէ հացի և թէ կտաւի կտորներ, ոտնամաններ,

կենդանի հաւերը, որոնց ծախում փող էր շինում՝ աղքատներին աւելի հեշտութիւնով բաժանելու համար։

«Առէք, առէք, եղբայրներ և քոյրեր, ամեն բան արժան է, ամեն բան մի կոպեկ է», կանչում էր նա փողոցներում։ Ամենքն էլ գիտենալով նրա ծախելու նպատակը՝ շտապում էին առած իրեղէնների գինը վճարելու։ Սառած և շատ անգամ էլ թրջուած գիշերները գնում էր Սինագոգան (հրէաների ժողովարան) և այնտեղ գաւթում նստած սպասում էր իր անօթով և կողովով մինչև կէս գիշեր՝ աղքատների դուրս ելնելը, որովհետև վերջիններս միշտ ուշ էին հաւաքվում գիշերներն աղօթքի։ — Հարուստների մօտ, նա ասում էր, չեմ սիրում գնալ, բայց այլ են աղքատները, սրանք ողորմութիւն են տալիս սարդ սրտով և խորին հաւատով։

Ահա թէ ինչպիսի աշխատանքների մէջ անց կացրեց իր կեանքն այս հաստատամիտ և բարութիւնով լի նշանաւոր մարդը։ Հասաւ խորին ծերութեան, երբէք չը թողնելով իր բարի գործը. նա մեռաւ 80 տարեկան հասակում, սգի մէջ ձգելով Վիլնօի բոլոր աղքատներին։

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂ

ԿՌԱՆ-ԹՕՓԻ

Տասն կամ աւելի տղաներ երկու մաս են բաժանվում – Ա. և Բ խումբ կազմելով։ Ա. խումբը Բ-ի համաձայնութեամբ վերևի կողմն է անցնում, որտեղ ամրացնում են մի տափարակ քար ճակատը դէպի ներքև արած. սրան անուանում են Հ է օ բ ա ն։

Բ խմբի տղաները փռվում են ընդարձակ տարածութեան վրայ։ Սրանք աշխատում են բռնել կամ արգելել այն գնտակի ընթացքը, որ Ա. խմբի տղաներից մէկը քանոնաձև տախտակով դէպի ներքև է ձգում։ Եթէ Բ խմբից մէկը գնտակը գետնի երեսով սլացնելով դիպցնում է քարին, այն ժամանակ գնտակ խփողը կ տ ր վ ո ւ մ է. սրա նման էլ պէտք է միւս ընկերներին կտրեն, որ յետոյ իրանք անցնեն Ա-ի տեղը և իրանց տեղը տան վերևի խաղացողներին։ Նոյնպէս ամենայն իրաւամբ Բ խումբը կարող է վերև անցնել, եթէ իրանցից մէկը չ ա ն թ ո ւ մ է (բռնում է) խփած գնտակը առանց գետնին վայր ձգելու։

Բայց եթէ Բ խումբը վերոյիշեալներից ոչ մէկը չէ կարողանում կատարել, մինչև խաղի վերջը ներքև է մնում և չարչարվում է, իսկ Ա. խումբը կատարելապէս յաղթող է հանդիսանում։

ԱՐՇԱԿ

ՋՈՒՐՃԱԼԻՔ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

29) Առաջ. օր. Միհրուհի

Մի ոտնանի, հազար ձեռներ,
Մի ձեռի վրայ անթիւ գլուխներ.
Կենդանի չէ՝ մարդ չի գալի,
Մեռած էլ չէ՝ ձայն չի տալի։
Գլուխը պոկես՝ լայ կը լինի,
Այդ մասը փոքր է, նազելի,
Ձեռը գլլես, ուրիշ կառնի,
Ոտը կտրես էլ չի ապրի։

30) Առաջ. Լ. Մ—Ա.

Հինգ տառ է, դրանցից սկզբի երկուսը ա մ ե ն մշեցու պատասխանն է, այդ պատասխանի վերջից մի տառ աւելացրած, ա մ ե ն մարդու, մանաւանդ երեխաների սիրելի զբաղմունք է, սկզբից մի տառ պակասեցրած՝ ա մ ե ն մարդու համար անհրաժեշտ գործածելիք է, վերջին երկուսից ա մ ե ն մարդ ունի, իսկ ամբողջն ա մ ե ն ք ի ն սիրած պտուղն է։

ԲԵՒՈՒՍ

ԴԸ



ում է

ԱՂԲԻՒՐԻ 8-9 №№-ի ՄԼՋ ԵՂԱՎ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԵՒ ԲՆԵՒՍԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ. – 26) *Հայը*, 27) *եղբայը*, 28).— *Հայրը*
Աննա
Յաղթող
Բախակից
Եղեր
Նուէնէ
Ի՞չ կամ Իաշ
Քաբա
Ըմբշամարտ

Հայը հենի քը զազը է չատ։

ԲՆԵՒՍ.—(*Խաղացող եղեայ*)—*լա ա զ ո զ։*

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆՑ։

Дозволено цензурою. Тифлисъ. 21 Октября 1883 г.

Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 5

«ԱՂԲԻՒՐԻ» ԹՄԲԱԳՐԱՏԱՆԸ ԵՒ ԹԻՖԼԻՍԻ ՅԱՅՏՆԻ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՆԵՐՈՒՄ ՅԱՒԿՈՒՄ ԵՆ ՏԻՊԱՐԱՆ ՆԱՋԱՐԵԱՆԻ ՀԵՏԵՒԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1) Փնաը Խօսնակ, Բանաստեղծութիւն Ն. Տ. Աւետեան գինն է . . . . . 50 կ.
2) Պօզնանի ուսուցչի օրագրէց, Լիտվոսի պատմած 20 կ.
Նոյնը կազմած . . . . . 30 կ.
3) Երկու Մանրավէպ, Ալֆոնս Տօդէ . . . . . 15 կ.
Նոյնը կազմած . . . . . 25 կ.
4 Սոխակ } Անդերսէն. 20 կ.
5 Խոզաբած }
Նոյնք կազմած . . . . . 30 կ.
6) Հարս և Սկեսուր, Դիւիկէֆս, Թարգմ. օր. Ն. Տ. Մարկոսեան . . . . . 15 կ.
Նոյնը կազմած . . . . . 25 կ.
7) Ղբլըցէ կընանոց պընը փըշակը, մի պատկեր Ղարաբաղի կանանց կեանքից, Կ. Կ. Մ. Շահնազարեանց . . . . . 20 կ.

«ԱՂԲԻՒՐԻ» ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ա) Ամսագրիս Նիւթերը ուղարկողները պէտք է հաղորդեն լրատու հասցէները, ևայլ կիզակ անուններով են գրում և իսկական անուններն էլ:

բ) Անպայման ուղարկուած Նիւթերը խմբագրութեան անպատասխանութեան են համարվում:

գ) Չը տպագրուելի Նիւթերը խմբագրութեան ստացած օրից մինչև երեք ամիս կարելի է յետ ուղարկել տերոջ ծախքով, եթէ նա երկու թերթից աւելի է, իսկ երկու թերթից պակաս գրուածները բոլորովին յետ չեն ուղարկվում:

դ) Հաշիւները փոխելու համար պէտք է ուղարկել 5 հատ 7 կ. մարկանոց:

ե) Յայտարարութիւնները ընդունվում են միայն խմբագրութիւններից, գրավաճառանոցներից, գրագարձներից, հեղինակներից, թարգմանիչներից և ուսումնական պետերից վաճառողներից:

Յայտարարութիւնների սանդ մի քանի, սրանք տառերով, վճարը 20 կոպէկ է, միջակ տառերով, 30 կոպէկ և մեծ տառերով 40 կոպէկ:

զ) Այն անձինք, որոնք մի ամսուայ ընթացքում № -ը լոյս տեսած և յայտարարած օրից չեն տեղեկացնել իրանց համարը չը ստանալուն համար, այնուհետև խմբագրութիւնս իրան պարտական չէ համարում բաւականութիւն տալ այդպիսիներին:

ԲՈՒՐԱՍ· ՄԱՆԿԱՆՑ

Պատիւ բազմազգ հրատարակութիւն ամսը երկու անգամ, տասնեակ գինը 4 ք. հրատարակվում է Պօլսում, տարազրուելով կոչուելի է «Վարժարան» ամսագրի խմբագրատան:

ԲԱՑՈՒԱԾ Է ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻՇՐՋԱՆԻ՝ 1884 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

„ԱՂԲԻՒՐ"

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ՄԻԱՄՍԵԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԵԽԱՆԵՐՈՒ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐՈՒ
ՀԱՄԱՐ։

(ՏԱՐԵԿԱՆԸ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ 12 ՀԱՄԱՐ 1—3 ՏՊԱԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ)
Կը հրատարակուի մեհենոյն դերքով և մեհենոյն ուղղութեամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I) Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, ոտանաւորներ, հեքիաթներ, ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ։
II) Բանաստեղծութիւններ։
III) Գիտութիւն և արուեստ։
IV) Մանկավարժական և այլ յօդուածներ, առաջարկութիւններ, լուրեր, խորհուրդներ։
V) Հետաքրքիր տեղեկութիւններ և խառն լուրեր։
VI) Մատենախօսութիւն և նոր գրքեր։
VII) Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

VIII) Մանկական, ֆրեբելեան, շախմատի և այլ խաղեր, րեբուսներ, թուաբանական խնդիրներ։
IX) Անեկդօտներ, հանելուկներ։
X) Սյլ և այլք։
XI) Երգեր նոտաներով։
XII) Յայտարարութիւններ։

«ԱՂԲԻՒՐԻ» տարեկան բաժանորդագինը **3** րուբլի է, կէս տարուանը՝ **2** րուբլի։
Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Агиоръ" իսկ արտասահմանից՝ Tfiis (Caucase) Rédaction du jurnal. «AGBUR.»

Տարեկան բաժանորդները կը ստանան երկու պրեմիա, յուլիսին մի պատկեր, իսկ դեկտեմբերին օգտակար առարկայ տարուայ համար։

«ԱՂԲԻՒՐԻՆ» Թիֆլիսում կարելի է ստորագրուել և հայ գրավաճառանոցներում, պ. Շահվերդեանի պավիլիոնում ու Մանկական գրադարանում։

Խմբագիր Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ։